

Լ. ՎԵՐԴՅԱՆ, Հ. ԽԱՌԱՏՅԱՆ

ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ ԵՎ  
ԶԱՐԴԱՅԻՆ ԴԻՄԱՀԱՐԴԱՐՈՒՄ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐ

ԴԱՍԱԽՈՍԻ ՁԵՌՆԱՐԿ



2012

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 377 : 687.53

ԳՄԴ 74.57 + 38.93

Վ 493

Վերոյան Լ.

Վ 493 Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում: Վարսահարդար:  
Դասախոսի ձեռնարկ/ Լ. Վերոյան, Հ. Խառատյան. -  
Եր.: Տիգրան Մեծ, 2012. - 64 էջ:

Սույն ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական կրթության «2304 - Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտությամբ (որակավորումը՝ «Վարսահարդար») դասախոսների համար: Ձեռնարկը մշակված է պետական որակավորման չափորոշի պահանջներին համաձայն:

Ձեռնարկը մշակվել և տպագրվել է ՄԱԶԾ «Օժանդակում նախնական և միջին մասնագիտական կրթության բարեփոխումներին» ծրագրի աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Դանիայի կառավարության կողմից և իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ: Ծրագրի նպատակն է նպաստել նախնական և միջին մասնագիտական կրթության բարելավմանը: Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, ինչպես նաև ձեռնարկի էլեկտրոնային տարբերակի համար կարող եք այցելել ինտերնետային կայքը՝ [www.vet.am](http://www.vet.am):



*Empowered lives.  
Resilient nations.*

ՀՏԴ 377 : 687.53

ԳՄԴ 74.57 + 38.93

ISBN 978-99941-0-493-2

© Հեղինակների խումբ, 2012

© ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, 2012

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության «Վարսահարդար» որակավորման դասագրքին կից ստեղծված ուսուցչի ձեռնարկը նպատակ ունի օգնել դասավանդողին արդյունավետ կազմակերպելու ուսումնական գործընթացը, լուսաբանելու դասագրքի մեթոդական ապարատը:

Ուսուցչի ձեռնարկը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված միջին մասնագիտական կրթության 2304 «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության «Վարսահարդար» որակավորման պետական կրթական չափորոշչի պահանջները:

Կարծում ենք՝ դասավանդողը, ելնելով պետական չափորոշչային պահանջներից, կապահովի սովորողների մասնագիտական պատրաստակալության պահանջվող մակարդակը:

Դասավանդողի համար դասերի պլանավորման հիմնական ուղենիշը պետք է լինի չափորոշիչը: Ճիշտ և հստակ պլանավորումը լայն հնարավորություններ է ստեղծում ուսուցումն արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար:

Ձեռնարկի յուրաքանչյուր թեմայի վերջում սովորողների գիտելիքները ամփոփելու նպատակով առաջարկված են «Ստուգիչ և ամփոփիչ հարցեր»: Ընդգրկված բոլոր հարցերի պատասխանները կօժանդակեն ուսումնասիրվող նյութի յուրացմանը, քանի որ բխում են համապատասխան թեմայի տեքստերից:

Ձեռնարկված են նաև մի շարք թեմաների մեթոդական մշակումներ, գործնական բնույթի աշխատանքներ, որոնք դասագրքի նյութերին կհաղորդեն գործնականություն՝ փորձելով բացահայտել դասագրքի գործադրման առանձնահատկությունները:

Ձեռնարկում զետեղված են նաև ուսուցման մեթոդներ, որոնց կիրառումը դասավանդման գործընթացը կդարձնի առավել արդյունավետ և ինտերակտիվ /փոխգործուն/:

## ԳԼՈՒԽ 1.

### ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Վարսավիրական գործիքներ:* Էլեկտրական և ոչ էլեկտրական սարքավորումների պարզ կառուցվածքը, գործածման ձևերը, սանիտարահիգիենիկ նորմերը և օգտագործման անվտանգության կանոնները, դրանք ճանաչելը, կիրառելը, ախտահանելը, տեխնիկական պարզ սպասարկում կատարելը:

#### **Սովորողները պետք է իմանան՝**

- սանրող գործիքները, դրանց դերն ու նշանակությունը.
- սանրող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- մազերը կտրող գործիքները, դրանց դերն ու նշանակությունը.
- կտրող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- չորացնող գործիքները, դրանց դերն ու նշանակությունը.
- չորացնող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- հարդարող և գանգրացնող գործիքները, դրանց դերն ու նշանակությունը.
- հարդարող և գանգրացնող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը:

#### **Սովորողները պետք է կարողանան՝**

- գործածել սանրող գործիքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- գործածել կտրող գործիքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- գործածել չորացնող գործիքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- գործածել հարդարող-գանգրացնող գործիքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը:

#### **Թեմայի նպատակը՝**

Սովորողներին ներկայացնել վարսավիրական գործիքների դերը վարսավիրական աշխատանքներում, դրանց կիրառումը:

## Խնդիրները՝

Սովորողները կճանաչեն և կգործածեն՝

- սանրող գործիքները.
- կտրող գործիքները.
- հարդարող և գանգրացնող գործիքները.
- չորացնող գործիքները.
- կկատարեն գործնական աշխատանքներ.
- նյութը կամփոփեն տրված հարցերի միջոցով:

## Մեթոդական ցուցումներ

- Ճիշտ է թեման սկսել՝ նշելով և կարևորելով վարսավիրական գործիքների դերը վարսավիրական աշխատանքներում:
- Գծակարգի միջոցով կարելի է ներկայացնել վարսավիրական գործիքների դասակարգումը:
- Նշել, որ այս գլխում ձեռք բերած վարսավիրական գործիքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքները, դրանց կիրառման ձևերին ազատ տիրապետելը հնարավորություն կտան ապագա վարսավիրին արագ կողմնորոշվելու մատուցվող ծառայության հարցերում: Իսկ անվտանգության կանոնների և այդ գործիքներին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջների խստիվ պահպանումը նրա աշխատանքը կդարձնի առավել անվտանգ:
- Սովորողներին կարելի է առաջարկել Վենի դիագրամի միջոցով ներկայացնել վարսավիրական գործում կիրառվող գործիքների ընդհանրություններն ու տարբերությունները/տես «Ուսուցման մեթոդներ» բաժնում/:
- Վարսավիրական գործիքների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելու համար դասավանդողը իր ձեռքի տակ պետք է ունենա վարսավիրական գործիքների հավաքածուները և մանրամասնորեն բացատրի դրանց կիրառման տեխնոլոգիաները:
- Յուրաքանչյուր վարսավիրական գործիքի համապատասխան գործողությունը ներկայացնելիս պետք է բացատրել, թե ի՞նչ մասերից են կազմված այդ գործիքները, օրինակ՝ մկրատը, վարսարդուկը, վարսահարդարիչը և այլն:

Թեմաների վերաբերյալ գործնական աշխատանքները հնարավորություն են տալիս սովորողներին ամրապնդելու տեսական գիտելիքները:


## Գործնական աշխատանքներ

### Գործնական աշխատանք թիվ 1.


Ցուցադրված են վարսավիրական ամենատարբեր գործիքներ.

- տրված գործիքները դասակարգել ըստ դրանց կիրառման նպատակների.
- սանրերի հավաքածուից ընտրել և հստակ ներկայացնել, թե ո՞ր սանրը ինչ նպատակով է օգտագործվում /կտրվածքից առաջ, կտրվածքի ընթացքում սանրելու, հարդարելու, մազափնջերի բաժանելու, մազերը և գլխամաշկը որակելու, սանրվածքին վերջնական տեսք հաղորդելու և այլ նպատակներով/.
- նկարել սանր, որն օգտագործվում է մեծ մազափնջեր սանրելու համար.  
ներկայացնել դրա կիրառման նպատակը.
- նկարել սանր, որը օգտագործում են փոքր մազափնջեր սանրելու համար.  
ներկայացնել դրա կիրառման նպատակը:

### Գործնական աշխատանք թիվ 2.




2.1. Տրված գծագրից օգտվելով՝ գրել, թե ինչ մասերից է կազմված մկրատը:



2.2. Օգտվելով նկարից՝ ցույց տալ, թե ինչպես պետք է բռնել ֆիլիրովային մկրատը:

### Գործնական աշխատանք թիվ 3.



Կենդանի մոդելի կամ կեղծամի վրա ցույց տալ պլաստմասե փշիկներ ունեցող վարսափաթաթուկով խոպոպիկների ստանալու տեխնոլոգիան:

Նշեք՝ ինչ նպատակով եք ստեղծում տվյալ խոպոպիկները, ինչ առաձգականություն դրանք ունեն/ հարդարումը առօրեական է, թե՞ տոնական/:

## Ստուգիչ և ամփոփիչ հարցեր

1. Քանի՞ տեսակների են բաժանվում մազերի համար նախատեսված գործիքներն ըստ իրենց իրականացրած գործողությունների:
2. Ինչո՞վ է պայմանավորված գործիքի ընտրությունը:
3. Ինչի՞ համար են նախատեսված վարսավիրական գործում օգտագործվող էլեկտրասարքավորումները:
4. Ինչի՞ համար են օգտագործում սանրերը վարսավիրական գործում:
5. Ըստ նշանակության քանի տեսակի են բաժանվում սանրերը:
6. Սանրերը բռնելու քանի՞ հիմնական և օժանդակ տարբերակներ գոյություն ունեն:
7. Նշե՞ք սանրով աշխատելու անվտանգության կանոնները:
8. Ի՞նչ չափերի են լինում մկրատները:
9. Քանի՞ տեսակի են լինում վարսավիրական մկրատները:
10. Նշե՞ք մկրատով աշխատելու անվտանգության կանոնները:
11. Քանի՞ տեսակի ածելիներ կան վարսավիրական գործում:
12. Նշե՞ք ածելիների հետ աշխատելու անվտանգության կանոնները:
13. Քանի՞ տեսակի են բաժանվում մազերի կտրվածք կատարող մեքենաները:
14. Նկարագրե՞ք մազ կտրող մեքենայի կառուցվածքը:
15. Նշե՞ք մազ կտրող մեքենաների հետ աշխատելու անվտանգության կանոնները:
16. Ի՞նչ գործիքներ են օգտագործվում մազերի հարդարման ընթացքում:
17. Վարսավիրական գործում քանի՞ տեսակի վարսափաթաթուկներ են օգտագործվում:
18. Էլեկտրափաթաթուկների քանի՞ տեսակներ գոյություն ունեն, և որը ի՞նչ նպատակով է կիրառվում:
19. Որո՞նք են մազերը չորացնող գործիքները:
20. Նշե՞ք մազերը հարդարող և գանգրացնող գործիքների հետ աշխատելու անվտանգության կանոնները:
21. Քանի՞ տեսակի էլեկտրական սարքեր են օգտագործվում ներկա ժամանակներում վարսավիրական սրահներում:
22. Նշե՞ք դրանց դերը և նշանակությունը վարսավիրական գործում:
23. Նշե՞ք էլեկտրասարքերի հետ աշխատելու անվտանգության կանոնները:

## ԳԼՈՒԽ 2.

### ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ

Մազերի վրացման, վերավրացման, հարդարման, ներկման, գանգրացման, բուժականխարգելման միջոցներ /նյութեր/:

#### Սովորողները պետք է իմանան՝

- մազերը վրացող և վերավրացող նյութերը, դրանց նշանակությունը.
- վրացող և վերավրացող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը, դրանց նշանակությունը.
- մազերը ներկող նյութերը, ներկանյութերի տեսակներն ու դրանց նշանակությունը.
- մազերը գանգրացնող նյութերը, դրանց նշանակությունը.
- վրացող, վերավրացող, ներկող, հարդարող, գանգրացնող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- բուժիչ-կանխարգելիչ միջոցներն ու դիմակների տեսակներն ու դրանց նշանակությունը.
- բուժիչ-կանխարգելիչ միջոցների ու դիմակների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- մաշկը պաշտպանող և ներկանյութը մաքրող միջոցները, դրանց նշանակությունը.
- մաշկը պաշտպանող և ներկանյութը մաքրող միջոցների միջոցների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- ախտահանող լուծույթներն ու դրանց նշանակությունը:

#### Սովորողները պետք է կարողանան՝

- տարբերակել մազերը վրացող և վերավրացող նյութերը.
- ներկայացնել հարդարման նյութերի օգտագործման հաջորդականությունը.
- ներկայացնել գանգրացնող նյութերով աշխատելու հաջորդականությունը.
- կիրառել դիմակներն ըստ նպատակի.
- պատրաստել ախտահանող լուծույթ ըստ ախտահանման պահանջվող նորմերի.
- օգտագործել ախտահանող լուծույթը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:



## **Թեմայի նպատակը՝**

Սովորողներին ներկայացնել վարսավիրական գործում օգտագործվող նյութերը, կարևորել դրանց դերը վարսավիրական աշխատանքներում, ուսումնասիրել դրանց օգտագործման ձևերը, պահպանման պայմաններն ու ժամկետները:

## **Խնդիրները՝**

Սովորողները կներկայացնեն մազերը

- լվացող և վերալվացող
- հարդարող
- գանգրացնող նյութերը,
- կտարբերակեն դրանք,
- կկատարեն գործնական աշխատանքներ.
- նյութը կամփոփեն տրված հարցերի միջոցով:

## **Մեթոդական ցուցումներ**

- Ճիշտ է թեման սկսել՝ նշելով, որ վարսավիրական գործում օգտագործվող նյութերը բաժանվում են 2 խմբի՝ մասնագիտական/պրոֆեսիոնալ/ և տնային օգտագործման: Վարսավիրանոցներում պարտադիր է մասնագիտական նյութերի օգտագործումը: Առանց դրանց վարսավիրական աշխատանքն անհնար է կազմակերպել:
- Հարկավոր է ծանոթացնել ուսանողներին վարսավիրական գործում օգտագործվող փրփրօճառների /նախատեսված տարբեր տեսակի մազերի համար/, հարդարող, ներկող, գանգրացնող նյութերի հետ: Շատ հարմար է դասակարգումները լավ պատկերացնելու համար օգտագործել նկարներ և պաստառներ՝ համապատասխան գծակարգերով: Դրանք կարող են պատրաստել նաև ուսանողները՝ դասագրքի տեսական նյութի հիման վրա /տես ստորև ներկայացված գործնական աշխատանքը/:
- Ուսանողները պետք է հստակ յուրացնեն ներկերի չորս խմբերի դասակարգումն ու դրանց կիրառման եղանակները՝ հակառակ դեպքում չեն կարողանա իրականացնել հաճախորդի մազերի ներկման ճիշտ տեխնոլոգիա, օրինակ՝ մազերի գունաթափման համար նախատեսված նյութերը պարունակում են օքսիդիչ, որը փոխազդեցության մեջ մտնելով մազի պիգմենտի հետ՝ այն քայքայում է մասամբ կամ ամբողջովին: Մասամբ քայքայման ժամանակ մազերի գույնը բացվում է, իսկ ամբողջական քայքայման դեպքում՝ մազերը գունաթափվում են:

**Հուշում:** Գունաթափման ենթակա են միայն առողջ մազերը:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

Ուսումնասիրել որևէ փրփրոճառի /լվացող միջոցի/ կիրառման հրահանգները, ցուցումները/բաղադրությունը, պիտանելիության ժամկետը/:

Ներկայացնել, թե տվյալ փրփրոճառը ինչ մազերի համար կօգտագործեք, և արդյոք այն ձեզ կօգնի ձեր ընտրած վարսավիրական գործողությունն իրականացնելու համար:

**Հուշում:** Մազերի փայլուն և առողջ տեսքն ապահովելու համար նախ հարկավոր է որոշել տվյալ մազի տեսակը և ապա ընտրել դրան համապատասխան վրացող միջոցները:

### **Գործնական աշխատանք թիվ 2.**

Հարկավոր է հաճախորդի գլուխը վանալ փրփրոճառով: Ձեր ձեռքի տակ ունեք խտացված փրփրոճառ: Ինչպե՞ս կվարվեք: Ցույց տվեք ձեր գործողությունները:

**Հուշում:** Բոլոր խտացված փրփրոճառներն օգտագործելուց առաջ անհրաժեշտ է ջրով բացել՝ 1:1 հարաբերությամբ:

### **Գործնական աշխատանք թիվ 3.**

Գծակարգի միջոցով ներկայացնել փրփրոճառների դասակարգումը:

### **Գործնական աշխատանք թիվ 4.**

Ներկայացնել հարդարող նյութերի հաջորդական օգտագործման քայլաշարն ըստ կիրառման հաջորդականության:

### **Ստուգիչ և ամփոփիչ հարցեր**

1. Մազերը վանալու համար ինչ նյութեր են հաճախ օգտագործում:
2. Ինչ նյութեր են պարունակում մազերի վրացման միջոցները:
3. Փրփրոճառները իրենց կազմությամբ քանի՞ տեսակի են բաժանվում:
4. Ըստ նշանակության փրփրոճառները քանի՞ տեսակի է կարելի բաժանել:
5. Փրփրոճառներն ըստ կազմության և ազդեցության քանի տեսակի են լինում:
6. Ներկանյութի քանի՞ խումբ գոյություն ունի:
7. Ո՞ր խմբի ներկանյութը ինչ նպատակով է օգտագործվում:
8. Անվանեք մազերի հարդարման միջոցները:
9. Որո՞նք են մազերի կառուցվածքը բարելավող միջոցները:

### ԳԼՈՒԽ 3.

## ՄԱՋԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մազաբանություն: Մազերի խնամք: Բուժկանխարգելիչ միջոցներ:

#### Սովորողները պետք է իմանան՝

- սանրման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը,
- մազերի տիպերը, որակը, նյութակազմվածքը, գլխի ճարպազատման աստիճանը,
- կանխարգելիչ միջոցների կիրառմամբ խնամել և բուժել մազերը, մերսել գլխամաշկը,
- ճիշտ որոշել գլխամաշկի և մազերի խնդիրը և գնահատել դրա աստիճանը:

#### Սովորողները պետք է կարողանան՝

- ճիշտ բռնել սանրը.
- ճիշտ սանրել մազերը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- լվանալ հաճախորդի գլուխը.
- ճիշտ ներկայացնել գլխի լվացման անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- ճիշտ ընտրել մազերը լվացող և վերալվացող նյութերը.
- ճիշտ որոշել ու կարգավորել ջրի ջերմաստիճանը.
- ճիշտ ընտրել չորացնող միջոցը.
- կարգավորել էլեկտրական սարքավորումների աշխատանքային ռեժիմը.
- ճիշտ կատարել չորացումը՝ մազերին տալով կտրվածքի ձևը և պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը.
- ճիշտ որոշել գլխամաշկի և մազերի խնդիրները և գնահատել դրանց աստիճանը.
- պատրաստել դիմակներ.
- ճիշտ տարածել դիմակը գլխամաշկի կամ մազերի վրա.
- պահպանել դիմակի կիրառման հրահանգի պահանջները.
- ճիշտ ընտրել գլխամաշկի մերսման ձևը և կատարել մերսում՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը:

## **Թեմայի նպատակը՝**

Սովորողներին ծանոթացնել մազերի կառուցվածքին, նախապատրաստել հաճախորդի գլխի վրացման տեխնոլոգիայի կատարման քայլաշարին:

## **Խնդիրները՝**

Սովորողները կիմանան՝

- մազի կազմաբանության, աճի, որակի, ժառանգականության գործոնի հետ կապված բազմաթիվ հարցեր.
- կներկայացնեն գլխի վրացման ու չորացման տեխնոլոգիան.
- կմատնանշեն այն միջոցներն ու ուղիները, որոնք մազերը կխնամեն և կպաշտպանեն վնասակար ազդեցություններից.
- նյութը կամփոփեն տրված հարցերի միջոցով.
- կկատարեն գործնական աշխատանքներ:

## **Մեթոդական ցուցումներ**

- Ճիշտ է թեման սկսել՝ սովորողներին հաղորդելով անհրաժեշտ տեղեկույթ մազի կազմաբանության, աճի, որակի մասին:
- Սովորողների ուշադրությունը հրավիրել գլխի վրացման համար նախատեսված ջրի կառուցվածքի և ջերմաստիճանի կարգավորման վրա, քանի որ վարսավիրի աշխատանքի հաջողությունը մեծապես կախված է այդ գործոններից /փրփոծառն անհրաժեշտ է միայն վաճառելու արդյունավետությունը բարձրացնելու համար/:
- Կարևորել սովորողներին իրազեկումը մերսման ցուցումներին: Այսինքն՝ որ դեպքում է մերսումը ցուցված, որ դեպքում՝ ոչ:

## **Հուշում**

- ◆ **Մերսումը ցուցված է** այն մարդկանց, որոնց ճարպագեղձերը վատ են աշխատում և հիպոտոնիկ են /արյան ցածր ճնշում/:
- ◆ **Մերսումը հակացուցված է** տարբեր մաշկային հիվանդությունների, խիստ մազաթափության, հիպերտոնիայի /արյան բարձր ճնշում/, նյարդային հիվանդությունների և գլխի վնասվածքների դեպքերում:
- T-աձև աղյուսակի միջոցով ցույց տալ մերսման դրական և բացասական կողմերը /տես «Ուսուցման մեթոդներ» բաժինը/:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

Ներկայացնել գլխի վրացման նախապատրաստական աշխատանքները կենդանի մոդելի վրա:

## **Գործնական աշխատանք թիվ 2.**

Համարակալել գործողություններն ըստ կատարման հաջորդականության՝

- փրփրոճառը տարածել շրջանաձև շարժումներով, մատների փափուկ բարձրներով շարժվել մազերի ծայրերից մինչև գլխի վերին գագաթը.
- փրփրոճառը լվալ
- գլխի հիգիենիկ վաճուճ կատարել երկու անգամ.
- խորհուրդ է տրվում անհրաժեշտ քանակությամբ փրփրոճառը նախ լցնել ափի մեջ՝ այն տաքացնելու համար, հետո նոր մազերին բաշխել.
- փրփրոճառը հավասարաչափ բաշխել մազերին՝ սկսելով մազարմատներից.
- մազերը խնամքով թրջել:

## **Գործնական աշխատանք թիվ 3.**

Կատարել մազերի չորացում՝ նշելով այն հակացուցումները, որոնք հարկավոր է հաշվի առնել այդ գործընթացի ժամանակ:

### **Հուշում**

- ◆ Մազերը վանալուց հետո խորհուրդ չի տրվում անմիջապես դրանք սանրել: Անհրաժեշտ է թողնել, որ մազերը չորանան բնական ճանապարհով /այդ նպատակով կարելի է օգտագործել նաև տաք սրբիչ/:
- ◆ Թաց մազերը հարդարելու համար խորհուրդ չի տրվում կիրառել շատ տաք վարսահարդարիչ:
- ◆ Սրբիչով չորացնելիս պետք չէ մազերը ուժեղ տրորել. լվացված մազերը հարկավոր է հավաքել սրբիչի մեջ, նուրբ շարժումներով չորացնել, այնուհետև սրբիչը հանել:
- ◆ Վարսահարդարիչով հարդարելու ժամանակ հարկավոր է այն գլխին շատ մոտ չպահել, և հարդարել թեթև չորացրած մազերը:

## **Գործնական աշխատանք թիվ 4.**

Իրականացնել վարսահարդարիչով մազերի հարդարման գործողությունները՝ օգտվելով ստորև ներկայացված քայլաշարից՝

- չորացնել մազերը արմատներից.
- չպահել վարսահարդարիչը նույն տեղում երկար ժամանակ. եթե ինչ-որ մաս դեռ չի չորացել, դրան կարելի է նորից անդրադառնալ.
- պահել վարսահարդարիչը 15 սմ-ից ոչ պակաս հեռավորության վրա.

**Հուշում:** Եթե հաճախորդը վարսահարդարիչով հարդարվում է շաբաթական 2 անգամ /հատկապես՝ եթե միաժամանակ օգտագործում է լաք և փաթաթուկ, ապա ամիսը մեկ անգամ անհրաժեշտ է օգտագործել մազերի խնամքի համար նախատեսված միջոցներ/:

### **Գործնական աշխատանք թիվ 5.**

Մոդելի վրա ցույց տալ գլխի մերսման տեխնոլոգիայի համար նախատեսված 12 շարժումները՝ ուղեկցելով դրանք համապատասխան մեկնաբանություններով:

### **Գործնական աշխատանք թիվ 6.**

Պատրաստել դիմակներ հետևյալ բաղադրություններով և ցույց տալ դրանք գլխամաշկի վրա տարածելու տեխնոլոգիան:

Մազերի արագ աճի համար հիանալի միջոց են նաև հետևյալ բաղադրությամբ դիմակները.

1. զեյթունի ձեթը, կոկոսի և գերչակի յուղերը խառնել և ստացված խյուսը տաքացնել: Այնուհետև քսել գլխամաշկին և թեթևակի մերսել:
2. Հազարաթերթիկը խառնել զեյթունի ձեթի հետ 1:4 հարաբերությամբ և դրանով տրորել գլխամաշկը:
3. Խառնել 1 բաժակ ջրիկ կավ, 1 ճաշի գդալ քացախ և 1/2 թեյի գդալ արնիկի թուրմ: Գլուխը լվանալ այդ խառնուրդով և պարզաջրել:
4. 30-50 գ սոխի կեփաները եռացնել 1 բաժակ ջրով 15-20 րոպե: 30 րոպե մնալուց հետո թողնել սառչի: Այս խառնուրդով թրջել չոր մազերը, չսրբել և թողնել ինքնուրույն չորանա:

**Իսկ որպես ընդհանուր խորհուրդ՝** հարկավոր է խմել շատ կաթ, ուտել բրյուսելյան կաղամբ, մրգեր ու բանջարեղեն. առողջ սնունդը ոչ միայն կնպաստի մազերի արագ աճին, այլև կպահպանի ձեր օրգանիզմի առողջությունը:

### **Ստուգիչ և ամփոփիչ հարցեր**

1. Ո՞ր գիտությունն է ուսումնասիրում մազի կազմաբանությունը:
2. Ի՞նչ նյութից է բաղկացած մազը:
3. Ի՞նչ ֆունկցիաներ են իրականացնում մազերը:
4. Մազաթափություն, ի՞նչ գիտեք դրա մասին:
5. Նշե՞ք մի քանի շատ տարածված պատճառներ, որոնք առաջ են բերում մազաթափություն:
6. Ի՞նչ գիտեք մազերի ճիշտ սննդակարգի մասին:
7. Ի՞նչ տեսակի խնամքի միջոցներ են օգտագործվում սրահներում:
8. Ի՞նչ պարագաների հավաքածու է անհրաժեշտ հաճախորդին սպասարկելու համար:
9. Ի՞նչ տեսակի արարողակարգ է գլխի լվացումը:
10. Ի՞նչ սկզբունքով է հարկավոր կատարել փրփոցճառների և պարզաջրիչ այլ կոսմետիկ միջոցների ընտրությունը:
11. Ինչպե՞ս են կատարվում գլխի լվացման նախապատրաստական և ավարտական աշխատանքները:
12. Ո՞րն է մազերը չորացնելու ամենաճիշտ ձևը:
13. Ի՞նչ նշանակություն ունի մերսումը մազերի համար:

## ԳԼՈՒԽ 4.

### ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Հաճախորդների հիմնական հոգեբանական տիպեր, շփման հիմունքներ և սկզբունքներ: Հաճախորդի ընդունում, բանակցությունների վարում, հաղորդակցում, հնարավոր խնդիրների լուծում:

#### Սովորողները պետք է իմանան՝

- հաճախորդների հոգեբանական հիմնական տեսակները, ինչպես նաև հաղորդակցման /շփման/ հոգեբանական հիմունքներն ու սկզբունքները.
- ընդունել հաճախորդին և վարել բանակցություն.
- իրենց իրավասության շրջանակները:

#### Սովորողները պետք է կարողանան՝

- ճիշտ նկարագրել հաճախորդի հոգեբանական հիմնական տեսակները և հաղորդակցման /շփման/ հոգեբանական հիմունքներն ու սկզբունքները.
- ճիշտ որոշել առաջարկվող «հաճախորդի» հոգեբանական տեսակը.
- հաճախորդի նկատմամբ ցուցաբերել անհրաժեշտ սիրալիրություն.
- տեղավորել հաճախորդին հարմարավետ բազկաթոռում.
- հաճախորդին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն՝ կտրվածքը և (կամ) սանրվածքն ընտրելու հարցում.
- հաճախորդի նկատմամբ լինել ուշադիր և սիրալիր, շարունակել հաճախորդի նախաձեռնությամբ սկսված զրույցը.
- հաստատությունում ստեղծել հյուրընկալության իրական մթնոլորտ.
- իրենց իրավասության շրջանակներում լուծել հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները,
- անհրաժեշտության դեպքում խնդիրը ճիշտ ներկայացնել իր վերադասին.
- ճիշտ ձևով հիշեցնել հաճախորդին հաստատությունում սահմանված կանոնների և հաշիվը փակելու անհրաժեշտության մասին:

#### Թեմայի նպատակը՝

Սովորողներին ներկայացնել հաճախորդի հետ շփվելու և աշխատելու հիմունքները, ձևավորել անհրաժեշտ հաղորդակցական կարողությունները:

#### Խնդիրները՝

Սովորողները կիմանան՝

- ինչպիսին պետք է լինի վարսավիրը.
- ինչպիսին պետք է լինի վարսավիրի արտաքին տեսքը.

- ինչպիսի հիգիենայի կանոններ պետք է պահպանի վարսավիրը.
- ինչպիսի հարաբերություններ հաստատի հաճախորդի հետ.
- ինչպես հաճախորդի հետ զրույց վարել.
- ինչպես լուծել հաճախորդի դժգոհության հարցը.
- ինչպես բաշխել աշխատաժամանակը:

### **Մեթոդական ցուցումներ**

- Աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում սովորողների մոտ հարկավոր է կարևորել ակտիվ հաղորդակցվելու կարողությունները:
- Սովորողները պետք է գիտակցեն, որ բազմաթիվ սոցիալական հարցեր ու խնդիրներ առաջանում են մարդկանց միջև անբավարար հաղորդակցման պատճառով:
- Աշխատանքում առաջնային պլան մղել հաճախորդի նկատմամբ սիրալիր վերաբերմունքը, ուշադրությունը, նրա նախաձեռնությամբ զրույց սկսելը և այլն:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

**Քննարկման թեմա՝** Ինչ ասել է՝ «Հաճախորդը միշտ ճիշտ է»:

Քննարկման արդյունքում ծնված գաղափարները գրառել, ապա ներկայացնել: Արծարծել նաև աշխատավայրում վարսահարդարի և հաճախորդի հաղորդակցման ապահովման խնդիրը:

### **Գործնական աշխատանք թիվ 2.**

**Քննարկման թեմա՝** Ինչ չափանիշներով եք որոշում հաճախորդի գոհ լինելը ձեր աշխատանքից:

Կազմեք հաճախորդին ճիշտ սպասարկելու ծառայությունների աղյուսակ:

Համեմատեք ձեր և ընկերոջ գրառումները:

### **Գործնական աշխատանք թիվ 3.**

Դերային խաղի միջոցով ներկայացնել հետևյալ իրավիճակը /առաջարկվող իրավիճակները հնարավորինս պետք է մոտ լինեն իրականությանը/:

### **Իրավիճակի նկարագրություն**

Դուք ձևավորել եք հարսնացուի սանրվածք, սակայն նա չի համաձայնվում ձեր կատարած աշխատանքի հետ՝ պահանջելով կամ անհրաժեշտ շտկումներ անել, կամ սանրվածքի ձևը փոխել: Հակառակ պարագայում նա հրաժարվում է վճարել:



## **Ինչ քայլեր կձեռնակեք**

Տվյալ դերային խաղը կառուցվում է կոնֆլիկտի շուրջ, որը կարող է առաջանալ տարբեր թյուրիմացություններից: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ ունեն:

Դերային խաղից հետո կարևոր է անցկացնել դեբրիֆինգ /տես «Ուսուցման մեթոդներ» բաժնում/:

## **Ստուգիչ և ամփոփիչ հարցեր**

1. Ինչպիսի՞ն պետք է լինի վարսավիրը:
2. Ինչպիսի՞ն պետք է լինի վարսավիրի արտաքին տեսքը:
3. Ինչպիսի՞ հիգիենայի կանոններ պետք է պահպանի վարսավիրը:
4. Ինչպիսի՞ հաղորդակցման կարողությունների պետք է տիրապետի վարսահարդարը:
5. Ինչպե՞ս հարաբերություն հաստատել հաճախորդի հետ:
6. Ինչպե՞ս հաճախորդի հետ զրույց վարել:
7. Ինչպե՞ս լուծել հաճախորդի դժգոհության հարցը:
8. Ինչպե՞ս բաշխել աշխատաժամանակը:
9. Ո՞ր դեպքում վարսահարդարը կարող է հրաժարվել հաճախորդին սպասարկելուց:

## ԳԼՈՒԽ 5.

### ՄԱՁԵՐԻ ԿՏՐՈՒՄ

Կանանց բազային, դասական, մոդելային կտրվածքներ, կատարման տեխնոլոգիաներ, կանանց կտրվածքների տարբեր մեթոդներ և հնարներ, տղամարդկանց կտրվածքների մեթոդներ, բեղերի և մորուսի ձևավորում:

#### Սովորողները պետք է իմանան՝

- մազերը կտրման նախապատրաստելը.
- մազերի կտրումը ըստ հրահանգի
- բեղերի, մորուսի կտրումը և ձևավորումը.
- կտրման գործողությունների ճիշտ հաջորդականությունը և անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ կանոնները:

#### Սովորողները պետք է կարողանան՝

- աշխատանքի նախապատրաստումը ճիշտ կատարել.
- մազաբաժանումը ճիշտ կատարել.
- կատարել մազերի կտրումը՝ կտրման տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ.
- ճիշտ կատարել կտրվածքի չորացման աշխատանքը /մազերի չորացման աստիճանը բավարար է/.
- ճիշտ կատարել աշխատանքի ավարտական գործողությունները.
- կտրվածքը համապատասխանեցնել հաճախորդի հետ նախապես համաձայնեցված ձևին:

#### Թեմայի նպատակը՝

Սովորողին տալ գիտելիքներ կանանց և տղամարդկանց կտրվածքների կատարման տեխնոլոգիաների վերաբերյալ, ձևավորել տարբեր մեթոդներով և հնարքներով կանանց կտրվածքներ կտրելու, կտրման գործողությունների ճիշտ հաջորդականությունը պահպանելու կարողություններ:

#### Խնդիրները՝

Սովորողները կիմանան՝

- կտրվածքների տեսակները.
- բաժուկների մասին.
- մազափնջերի մշակման ձևերը.
- կտրվածքների ձևերը.
- ճակատային մազափնջերի ձևերը.
- կկատարեն գործնական աշխատանքներ.
- նյութը կամփոփեն տրված հարցերի միջոցով:

## Մեթոդական ցուցումներ

- Ճիշտ է թեման սկսել՝ նշելով, որ կտրվածքի կատարման որակից է կախված մոդելավորման հաջողությունը, այն է՝ ապագա սանրվածքի տեսքը:
- Հարկավոր է կտրվածքի նախապատրաստական փուլում ստուգել գործիքների հիգիենիկ վիճակը, կրել աշխատանքային համապատասխան հագուստ, ձեռքերն օճառով լվանալ և ապա անցնել հաճախորդին սպասարկելու:
- Անհրաժեշտ է ստուգել մազերի և գլխամաշկի վիճակը՝ սանրելով հաճախորդի մազերը: Եթե վարսահարդարը հայտնաբերում է, որ հաճախորդն ունի որևէ մաշկային հիվանդություն, ապա նա կարող է հրաժարվել տվյալ հաճախորդին սպասարկելուց:
- Հաճախորդի տեսքը վարսահարդարումից հետո մեծապես կախված է կտրվածքի ճիշտ ընտրությունից և դրա արհեստավարժ կատարումից: Հաջողված է համարվում այն կտրվածքը, որը հետագայում քիչ խնամք է պահանջում:

## Գործնական աշխատանքներ

### Գործնական աշխատանք թիվ 1.

Ներկայացնել կարճ մազերի կտրման քայլերը մոդելի վրա:

### Գործնական աշխատանք թիվ 2.

Ներկայացնել կարճ սանրվածքին համապատասխան ճակատային մազափնջի կտրման քայլերը մոդելի վրա:

### Գործնական աշխատանք թիվ 3.

Մոդելի վրա ցույց տալ բաժուկները և նշել նրանց անվանումները:

### Գործնական աշխատանք թիվ 4.

Մոդելի վրա ցույց տալ մազափնջերի մշակման ձևերը:



1. Մազերի ներքին կտրում



2. Մազերի արտաքին կտրում



3. «Պոյնտինգ»



4. Մազերի հանում



5. Սլայսինգ

**Գործնական աշխատանք թիվ 5.**

Մոդելի վրա ցույց տալ ուլորած մազերի կտրումը



Ուլորած մազափնջի կտրումը եզրակտրման ժամանակ ուղիղ կտրվածքի հնարով:



Ուլորած մազափնջի կտրումը «սահող» կտրվածքով:



ա)



բ)

Ուլորած մազափնջի կտրումը ուղիղ կտրվածքով՝ ա. ուղղաձիգ բ. զուգահեռ մազերի նկատմամբ:

## Գործնական աշխատանք թիվ 6.

Մոդելի վրա ցույց տալ ստուգիչ մազափնջի կտրումը



Մազերի կտրումը ըստ ստուգիչ մազափնջի ձգման  $90^\circ$ -ով:



Մազերի կտրումը մազափնջի ձգման  $0^\circ$ -ով:



Ծոծրակային հարվածի մազերի կտրումը ըստ ստուգիչ մազափնջի:

## Ստուգիչ և ամփոփիչ հարցեր

1. Ի՞նչ փուլեր է պարունակում մազերի կտրման գործընթացը:
2. Մազերի կտրվածքի համար ի՞նչ նախապատրաստական փուլեր գոյություն ունեն:
3. Ի՞նչ է բաժուկը:
4. Մազափնջերի մշակման (կտրման) քանի՞ ձև գոյություն ունի:
5. Ինչպե՞ս է կատարվում մազերի ներքին կտրումը:
6. Ինչպե՞ս է կատարվում մազերի արտաքին կտրումը:
7. Ի՞նչ է նշանակում «պոյնտինգ»:
8. Ի՞նչ է նշանակում «սլայսինգ»:
9. Ի՞նչ է նշանակում «ստուգիչ մազափունջ» բառակապակցությունը:
10. Ի՞նչ է նշանակում «մազափնջերի ձգում» բառակապակցությունը:
11. Ի՞նչ է նշանակում «մազերը զրոյական վիճակում»:
12. Նկարագրե՛ք «տուշովկայի» կատարման տեխնոլոգիան:
13. Ինչպիսի՞ գործիքներով են կատարում ֆիլիրովկա:
14. Նկարագրե՛ք «մազափունջը մազափնջի հետևից» մեթոդը:
15. Ի՞նչ է նշանակում «գրադուիրովկան»:
16. Ինչպե՞ս է կատարվում եզրագծով կտրումը:
17. Ի՞նչ նշանակություն ունի սանրվածքի համար ճակատի մազափունջը:
18. Նշե՛ք ճակատի մազափնջերի տեսակները:
19. Ինչպե՞ս է կատարվում ճակատային մազափնջի ֆիլիրովկան և եզրակտրումը:
20. Անվանե՛ք տղամարդկանց մազերի կտրվածքների տեսակներն ու տիպերը:
21. Ի՞նչ ընդհանրություն և տարբերություն ունեն տղամարդկանց և կանանց սանրվածքները:

## ԳԼՈՒԽ 6.

### ՄԱԶԵՐԻ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Վարսավիրական արվեստի ծագման և զարգացման պատմությունը: Մազերի հարդարում: Կեղծամներ, դրանց տեսակները:

#### Սովորողները պետք է իմանան՝

- վարսավիրական արվեստի ծագման և զարգացման պատմությունը.
- մազերը հարդարման եղանակները.
- կեղծամները, դրանց տեսակները:

#### Սովորողները պետք է կարողանան՝

- ճիշտ ներկայացնել վարսավիրական արվեստի զարգացման պատմությունը.
- մազերը նախապատրաստել հարդարման.
- կատարել կանանց մազերի հարդարում ըստ հրահանգի.
- կատարել մազերի հարդարում՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ կանոնները.
- հարդարումը համապատասխանեցնել հաճախորդի հետ նախապես համաձայնեցված ձևին.
- հարմարեցնել կեղծամը.
- կատարել կեղծամի հարդարում:

#### Թեմայի նպատակը՝

Սովորողին տալ գիտելիքներ վարսավիրական արվեստի ծագման և զարգացման պատմության, մազերի և կեղծամների հարդարման տեսակների, եղանակների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել տարբեր եղանակներով կանանց և տղամարդկանց մազերի հարդարման, ավարտական գործողությունների կատարման, կեղծամների հարմարեցման կարողություններ:

#### Խնդիրները՝

Սովորողները կիմանան՝

- վարսավիրական արվեստի զարգացման պատմությունը.
- սանրվածքների դասակարգումը.
- վարսափաթաթուկով աշխատելու տեխնիկան.
- կեղծամների խնամքի մասին:

#### Մեթոդական ցուցումներ

- Դասարանը բաժանել խմբերի և հանձնարարել դասագրքի՝ «Վարսավիրական արվեստի ծագման և զարգացման պատմությունը» նյութ-

թը բաժանել ըստ տարբեր պետություններում այդ արվեստի մասին ստեղծված պատկերացումների, և յուրաքանչյուր խումբ ներկայացնի իր մասը:

- Սովորողների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ կեղծամները ոչ միայն մարդու արտաքինին յուրօրինակություն և հետաքրքրություն հաղորդելու համար են, այլև մազաթափության կամ քիմիաթերապիայի հետևանքով առաջացած խնդիրներին լուծում տալու միջոց են: Բացի այդ, մարդիկ կեղծամներ օգտագործում են նաև գլուխը ցրտից պաշտպանելու համար /մինչև - 15°/: Այս դեպքում կեղծամը փոխարինում է գլխարկին:
- Հանգամանորեն ներկայացնել նաև կեղծամների խնամքին ներկայացվող պահանջները:
- Ցույց տալ առօրեական հարդարման ձևեր՝ կապված որևէ դեմքի տեսակից:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

Գծակարգով ցույց տուր սանրվածքների դասակարգումը:

### **Գործնական աշխատանք թիվ 2.**

Մոդելի վրա ցույց տուր մազերի հարդարումը փաթաթուկի միջոցով:

### **Գործնական աշխատանք թիվ 3.**

Մոդելի վրա ցույց տուր հորիզոնական ալիքների ստացումը:

### **Գործնական աշխատանք թիվ 4.**

Մոդելի վրա ցույց տուր մազերի փաթաթման տարբերակները՝ կախված ընտրված սանրվածքներից:

### **Գործնական աշխատանք թիվ 5.**

Մոդելի վրա ցույց տուր մազերի հարդարում «բրաշինգ», «տուպիրովկա» մեթոդներով:

## **Ստուգիչ և ամփոփիչ հարցեր**

1. Ներկայացրեք վարսավիրական արվեստը Հին Եգիպտոսում:
2. Ներկայացրեք վարսավիրական արվեստը Հին Հունաստանում:
3. Ներկայացրեք վարսավիրական արվեստը Հին Հռոմում:
4. Ներկայացրեք վարսավիրական արվեստը Միջին դարերում (V-XIV դդ.):
5. Ներկայացրեք վարսավիրական արվեստը Վերածննդի դարաշրջանում (XIV -XVI դդ.):

6. Ներկայացրե՞ք վարսավիրական արվեստը ռոկոկոյի դարաշրջանում (XVIII դ. առաջին կես):
7. Ներկայացրե՞ք վարսավիրական արվեստը կլասիցիզմի դարաշրջանում (XVIII դ. առաջին կես):
8. Ներկայացրե՞ք վարսավիրական արվեստը ամպիր և բիդերմեյեր դարաշրջաններում:
9. Ներկայացրե՞ք կեղծամաների ստեղծման պատմությունը:
10. Նկարագրե՞ք կեղծամաների տեսակներն ու կիրառությունը:
11. Նկարագրե՞ք կեղծամաների խնամքը:
12. Ի՞նչ կապ կարող են ունենալ կտրվածքները և սանրվածքները:
13. Ի՞նչ գործիքներով և միջոցներով են հարդարվում մազերը:
14. Ինչպե՞ս կարելի է մեկ սանրվածքի հիման վրա ստանալ մեկ ուրիշ սանրվածք:
15. Նկարագրե՞ք փաթաթուկով աշխատելու կանոնները:
16. Նկարագրե՞ք մազերի հարդարում «բրաշինգ» մեթոդով:
17. Նկարագրե՞ք մազերի գզում և «տուպիրովկա» մեթոդը:



## ԳԼՈՒԽ 7.

### ՄԱՋԵՐԻ ԳԱՆԳՐԱՑՈՒՄ

#### Մազերի գանգրացում: Մազերի գանգրացման տեսակները:

##### Սովորողները պետք է իմանան՝

- մազերի գանգրացման ծագման պատմությունը.
- գանգրացման տեխնոլոգիան.
- գանգրացման տեսակները:

##### Սովորողները պետք է կարողանան՝

- մազերը նախապատրասել գանգրացման.
- կատարել մազերի գանգրացում ըստ հրահանգի.
- ճիշտ ընտրել և օգտագործել գանգրացման ժամանակ կիրառվող գործիքները, օժանդակ պարագաները և նյութերը.
- ճիշտ կատարել մազերի գանգրացումը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ կանոնները.
- ճիշտ կատարել աշխատանքի ավարտական գործողությունները.
- գանգրացումը համապատասխանեցնել հաճախորդի հետ նախապես համաձայնեցված ձևին:

##### Թեմայի նպատակը՝

Սովորողին տալ գիտելիքներ մազերի գանգրացման տեսակների վերաբերյալ, ձևավորել դասական և մոդելային գանգրացման, նյութերի և սարքավորումների ընտրման և ըստ հրահանգի կիրառման, ավարտական գործողությունների կատարման կարողություններ:

##### Խնդիրները՝

Սովորողները կիմանան՝

- քիմիական գանգրացման տեխնոլոգիան.
- քիմիական գանգրացման տեսակները.
- նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը.
- քիմիական նյութի օգտագործումը մազերի գանգրացման գործընթացում.
- գանգրացված մազերի խնամքի մասին:

##### Մեթոդական ցուցումներ

- Սովորողին հիմնավոր ներկայացնել, որ այս արարողակարգի արդյունքում ուղիղ մազերն ալիքաձև են դառնում: Սակայն պետք է նշել, որ քիմիական գանգրացման ժամանակ մազերը խիստ տուժում են, որովհետև ուղիղ մազերը գանգուր տեսք են ստանում՝ մազերի

կառուցվածք թափանցող քիմիական ուժեղ միջոցների անմիջական ազդեցության տակ:

- Նշել, որ շատ կարևոր է ինչպես քիմիական նյութերի ճիշտ ընտրությունը, այնպես էլ նախատեսված ժամանակի ճշգրիտ պահպանումը: Օրինակ՝ եթե աշխատել են բարձր կոնցենտրացիա ունեցող քիմիական նյութերով և երկարացրել են աշխատանքի համար նախատեսված ժամանակը, ապա մազը կլինի թույլ, զգայուն և լավ չի պահի անհրաժեշտ ձևը: Իսկ եթե վերցրել ենք թույլ կոնցենտրացիա ունեցող քիմիական բաղադրություն և կրճատել եք քիմիան կատարելու ժամանակը, ապա այդպիսի գանգրացումը ևս չի կարող երկար դիմանալ:
- Սովորողի ուշադրությունը հրավիրել հետևյալ հանգամանքի վրա. որպեսզի ստացված խոպոպները երկար պահպանվեն, հարկավոր է կիրառել բաղադրանյութեր, որոնք ունեն օքսիդացնող հատկություններ:
- Քիմիական գանգրացումից հետո՝ օգտագործվող բոլոր ֆիքսատորները կրում են 3%-անոց ջրածնի պերօքսիդ: Դրա ազդեցությամբ մազերի ներքին կապերը վերականգնվում են և դրանց հաղորդում իրենց նախկին հատկությունները:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

Ինչ է անհրաժեշտ քիմիական գանգրացում կատարելու համար:  
Լրացրո՛ւ պարագաների շարքը՝

անջրաթափանց թիկնոց.

պոչիկով սանր.

.....

.....

.....

### **Գործնական աշխատանք թիվ 2.**

2.1. Հաճախորդը ցանկանում է իր մազերը ենթարկել քիմիական գանգրացման:

Ինչի՞ց պետք է սկսել ձեր աշխատանքը: Նշիր ճիշտ պատասխանը.

- միանգամից կանցնեմ աշխատանքի կատարմանը.
- հաճախորդին սուրճ կառաջարկեմ.
- կստուգեմ մազերի որակը:

2.2. Ներկայացրո՛ւ քիմիական գանգրացման փուլերը:

### **Ստուգիչ և ամփոփիչ հարցեր:**

1. Ներկայացրե՞ք քիմիական գանգրացման զարգացման պատմությունը:
2. Ինչպե՞ս է կատարվում մազերի քիմիական գանգրացման տեխնոլոգիան:
3. Նկարագրե՞ք քիմիական գանգրացման սկզբունքները:
4. Ի՞նչ բաղադրանյութեր են կիրառում քիմիական գանգրացման համար:
5. Ի՞նչ կապ ունեն ճիշտ հրահանգները քիմիական գանգրացման գործընթացում:
6. Ի՞նչ նշանակություն ունեն ֆիքսատորները քիմիական գանգրացման համար:
7. Նշե՞ք քիմիական գանգրացման արագությունը և գանգուրի առաձգականության կապը:
8. Նշե՞ք մազերի քիմիական գանգրացման կատարման փուլերը:
9. Ինչպե՞ս է կատարվում մազերի վիճակի և գլխամաշկի գնահատում մինչև քիմիական գանգրացումը:
10. Ինչո՞ւ է պետք մազերը լվանալ քիմիական գանգրացումից առաջ:
11. Նկարագրե՞ք քիմիական գանգրացման տեսակները:
12. Ինչի՞ց է կախված կոկլյուչների տրամագծի ընտրությունը:
13. Մազերի փաթաթման ի՞նչ մեթոդներ գոյություն ունեն:
14. Ինչո՞ւ է պետք մազերը պարզաջրել քիմիական գանգրացման ժամանակ:
15. Ի՞նչ նշանակություն ունի ֆիքսացումը գանգրացման ժամանակ:
16. Ինչպե՞ս է կատարվում մազերի վերջնական մշակումը:
17. Նշե՞ք քիմիական գանգրացման տեսակները:
18. Ինչպե՞ս են կատարվում քիմիական գանգրացման ոչ ավանդական ձևերը:
19. Ինչպե՞ս է իրականացվում գանգրացված մազերի խնամքը:

## ԳԼՈՒԽ 8.

### ՄԱՁԵՐԻ ՆԵՐԿՈՒՄ

Մազերի ներկում: Ներկման տեխնոլոգիաներ: Տարբեր ներկանյութերի պատրաստման եղանակներ:

#### Սովորողները պետք է իմանան՝

- մազերի ներկման տեսակների
- տարբեր ներկանյութերի /նախա/պատրաստման եղանակների.
- ներկման տեխնոլոգիաների մասին:

#### Սովորողները պետք է կարողանան՝

- մազերը նախապատրաստել ներկելուն.
- ընտրել համապատասխան ներկանյութը, որոշել գույնը, ներկման տեսակը և նախապատրաստել ներկանյութը.
- ճիշտ ներկայացնել մազերի ներկանյութերի տեսակները և տարբեր ներկանյութերով աշխատելու տեխնոլոգիան.
- ճիշտ ներկայացնել մազերի ներկման տեսակները.
- ճիշտ ընտրել ներկանյութը, որոշել դրա գույնը կամ գունային համադրությունը և ներկման տեսակը՝ հաճախորդի առանձնահատկություններին համապատասխան.
- ճիշտ նախապատրաստել ներկանյութը.
- կատարել մազերի ներկում տվյալ ներկանյութի հրահանգին համապատասխան
- ճիշտ կատարել մազերի ներկում՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և սանիտարահիգիենիկ կանոնները.
- ճիշտ կատարել ներկման ավարտական աշխատանքները.
- մազերի ներկման արդյունքը համապատասխանեցնել հաճախորդի հետ նախապես համաձայնեցված գույնին և ներկման տեսակին:

#### Թեմայի նպատակը՝

Ուսանողին տալ գիտելիքներ մազերի ներկման տեսակների, տարբեր ներկանյութերի /նախա/պատրաստման եղանակների և ներկման տեխնոլոգիաների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ներկերն ընտրելու, կիրառելու, ըստ հրահանգի օգտագործելու կարողություններ:

#### Խնդիրները՝

- Ուսանողները կիմանան՝
- մազերի ներկման պատմությունը
- մազերի ներկման տեխնոլոգիան.
- մազերի ներկման տեսակները.
- մազերի ներկում չորս խմբի ներկանյութերով.

- մազերի ներկման փուլերը.
- ներկած մազերի խնամքը.
- ներկման ժամանակակից մեթոդները:

### **Մեթոդական ցուցումներ**

- Խորհուրդ է տրվում թեման սկսել հիմնական և երկրորդային գույների մասին զրույց վարելով: Ուսանողները ներկայացնեն, որոնք են հիմնական գույները և ինչպե՞ս կարելի է դրանցից ստանալ երկրորդային գույներ:
- Ուսանողները պետք է ուսումնասիրեն հագեցած բնական գույների սանդղակը, ներկայացնեն դրանց ցանկը:
- Անպայման անդրադարձ կատարել ներկանյութերի չորս խմբերի դասակարգմանը /տես գլուխ 2-ը/:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

Վերցրե՛ք որևէ ֆիրմայի արտադրության ներկանյութ: Ուսումնասիրե՛ք բաղադրությունը, ներկայացրե՛ք՝ որ խմբին է պատկանում, երբ և ի՞նչ նպատակով այն կօգտագործեք:

### **Գործնական աշխատանք թիվ 2.**

Կատարել գործողություններն ըստ ցուցումների՝  
/ներկանյութը մազերին քսելու կանոնները/

1. Քսուքանման ներկանյութերը քսում են վրձնի օգնությամբ, կարճ մազերի դեպքում՝ ուղղահայաց բաժուկներով և հորիզոնական բաժուկներով, եթե մազերը երկար են:
2. Հեղուկ ներկանյութը քսում են սպունգով կամ ապլիկատորով՝ հորիզոնական բաժուկներով:
3. Բոլոր ներկանյութերը սկսում են քսել ծոծրակային հատվածից: Վերջում մշակվում է մազերի աճման եզրագիծը, որտեղ մազերն ավելի ընկալունակ են ներկի նկատմամբ, որովհետև ծակոտկեն են: Պարանոցի վրա աճող մազերը նույնպես խորհուրդ է տրվում վերջում ներկապատել: Հատկապես այն վերաբերում է մուգ գույնի և կարմրավուն երանգ ունեցող մազերին: Այլապես կարող է ստացվել ոչ բնական ուրվագիծ:
4. Սպիտակած մազերի մասնակի ներկման դեպքում ներկը սկսում են քսել այն հատվածներում, որտեղ ավելի շատ են սպիտակ մազափնջերը: Մազերի ընդհանուր զանգվածը ներկելուց հետո կրկին վերադառնում են նույն հատվածներին:

5. Նախնական ներկման ժամանակ ներկանյութը քսում են սկզբում արմատներից 2-3 սմ բարձր, իսկ 10 ր անց՝ արմատներին: Դա հատկապես կարևոր է բաց գույների ներկման ժամանակ:
6. Կրկնակի ներկման ժամանակ ներկանյութը սկզբում քսում են արմատներին, իսկ 10 ր հետո՝ մազերի ամբողջ երկարությամբ:
7. Քիմիական ներկանյութերն օգտագործելու ժամանակ տաքացնող գլխարկ չեն օգտագործում:
8. Ներկման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ոչ մետաղյա գործիքներ և սարքեր, գործողություններն անպայման կատարել ձեռնոցներով:
9. Ներկերը խառնելուց հետո պետք է անմիջապես այն օգտագործել:
10. Ներկի քսումը պետք է տևի 10 րոպեից ոչ ավելի:

### Գործնական աշխատանք թիվ 3.

Համարակալել ըստ կատարման հաջորդականության

/մազերի ներկման փուլերը/

Մազերի նախնական լվացում /անհրաժեշտության դեպքում/:

Մազի ներկի ընտրություն:

Մազերի վրա ներկի ժամանակահատվածի ֆիքսում:

Մազերի լվացում ներկից:

Մազերին ներկի քսում:

Ներկած մազերի խնամք:

Թեստավորում:

### Գործնական աշխատանք թիվ 4.

Օգտվելով գծագրերից՝ կեղծամի վրա ցույց տալ «փայլաթիթեղով միլի-րովկան»:



1.



2.



3.



4.



5.



6



7.

### Ստուգիչ և ամփոփիչ հարցեր

1. Ինչ տվյալներ են մեզ հասել մազերի ներկման մասին:
2. Ինչպիսիք կարող են լինել մազերի ներկերը:
3. Մազերի ներկման ինչ տեսակներ գոյություն ունեն:
4. Ինչո՞վ է տարբերվում գունաբացումը գունաթափումից:
5. Ինչո՞վ է տարբերվում մազերի ներկումը և մազերի երանգավորումը:
6. Նկարագրե՞ք շերտաներկման, կոլորիրովկայի, բալայաժի գործընթացը:
7. Ինչ հիմնական գույների կիրառմամբ է իրականացվում մազերի ներկումը:
8. Ժամանակակից վարսավիրական գործում մազերի ներկման ինչ եղանակներ են կիրառվում:
9. Նշե՞ք ներկանյութը մազերին քսելու կանոնները:
10. Որո՞նք են մազերի ներկման փուլերը:
11. Ինչ է իրենից ներկայացնում շերտաներկումը:
12. Ինչպե՞ս է կատարվում «միլիրովկա փայլաթիթեղով»:
13. Ինչպե՞ս է կատարվում ալիքանման սանրվածքի շերտաներկումը:
14. Նկարագրե՞ք շերտաներկումը փայլաթիթեղյա սկավառակի օգնությամբ:
15. Ինչ է իրենից ներկայացնում կոլորիրովկան:

## ԳԼՈՒԽ 9.

Դեմքի տիպեր, գլխի ձևեր, կառուցվածքներ, սանրվածքների ուրվագծեր: Բարդ և հանդիսավոր սանրվածքներ:

### Սովորողները պետք է իմանան՝

- դեմքի տիպերը և առանձնահատկությունները.
- գլխի ձևերը և մարդաչափական տվյալները.
- կտրվածքների տեսակներն ու տիպերը.
- ճակատային մազափնջերի կտրման և ձևավորման տեսակները.
- մոդելավորել կտրվածքը.
- մոդելավորել սանրվածքը.
- բարդ և հանդիսավոր սանրվածքների առանձին տարրեր:

### Սովորողները պետք է կարողանան՝

- ճիշտ ներկայացնել դեմքի տիպերը.
- ճիշտ բնութագրել դեմքի առանձնահատկությունները.
- ճիշտ ներկայացնել մարդաչափական տվյալները.
- ճիշտ ներկայացնել գլխի ձևերը կիսադեմից.
- ճիշտ ներկայացնել կտրվածքների տեսակներն ու տիպերը.
- ճիշտ բնութագրել կտրվածքների առանձնահատկությունները.
- ճիշտ ներկայացնել սանրվածքների տեսակներն ու տիպերը.
- ճիշտ բնութագրել սանրվածքների առանձնահատկությունները.
- ճիշտ ներկայացնել ճակատային մազափնջերի կտրման և ձևավորման տեսակները.
- ճակատային մազափնջի ձևը ճիշտ որոշել.
- ճիշտ ներկայացնել սանրվածքների ուրվագծերը.
- ճիշտ ընտրել կտրվածքը՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևը, մարդաչափական առանձնահատկությունները և մազերի տիպը.
- ճիշտ մոդելավորել կտրվածքը՝ հաշվի առնելով հաճախորդի առանձնահատկությունները.
- ճիշտ ընտրել կտրվածքը՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևը, մարդաչափական առանձնահատկությունները և մազերի տիպը, ինչպես նաև սանրվածքի նշանակությունը.
- ճիշտ մոդելավորել կտրվածքը՝ հաշվի առնելով հաճախորդի առանձնահատկությունները.
- ճիշտ ձևավորել սանրվածքը.
- ճիշտ ընտրել և օգտագործել դեկորատիվ դետալները:



### **Թեմայի նպատակները՝**

Ուսանողին տալ գիտելիքներ դեմքի տիպերի, գլխի ձևերի, կառուցվածքների, սանրվածքների ուրվագծերի և տիպերի վերաբերյալ, ինչպես նաև ճակատային մազափնջերը ձևավորելու, կտրվածքները և սանրվածքները մոդելավորելու կարողություններ:

Ուսանողին տալ գիտելիքներ բարդ և հանդիսավոր սանրվածքների տարրերի, դրանց տարբեր համադրությունների, տեսակների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել տարբեր օժանդակ պարագաների և դեկորատիվ դետալների օգտագործմամբ այդ սանրվածքների կատարման կարողություններ:

### **Խնդիրները՝**

Ուսանողները կիմանան՝

### **Մեթոդական ցուցումներ**

- Հարկավոր է թեման սկսել՝ կարևորելով մոդելավորման, որպես կիրառական արվեստի, դերը վարսավիրական գործում, նշելով, որ մոդելավորման հիմնական նպատակը տվյալ մարդու անհատականության ընդգծումն է:
- Նշել, որ սանրվածքն ընտրելիս ունենք որոշակի սահմանափակումներ՝ կախված տարիքից, սեռից, հաճախորդի ոճից: «Մարդն ինքը ոճ է»․ ունենալ ոճ՝ նշանակում է արտաքին ամեն մի դետալ դիտարկել ներդաշնակության մեջ՝ սանրվածքը, դիմահարդարումը, հագուստն ու շարժումները:
- Փորձել տարանջատել հանդիսավոր և առօրեական սանրվածքները՝ մատնանշելով դրանց կիրառման տեղը և դերը:

## **Գործնական աշխատանքներ**

### **Գործնական աշխատանք թիվ 1.**

Նկարների միջոցով պատկերել դեմքի կառուցվածքները:

### **Գործնական աշխատանք թիվ 2.**

Դեմքի յուրաքանչյուր կառուցվածքի համար ընտրել որևէ սանրվածք:

### **Գործնական աշխատանք թիվ 3.**

Հաճախորդը Ձեզ է դիմել խորհրդով, որպեսզի օգնեք իրեն ընտրելու երեկոյան սանրվածք: Ինչ քայլեր կձեռնարկեք: Որտեղի՞ց կսկսեք ձեր աշխատանքը: Ներկայացրե՞ք այն ու մեկնաբանե՞ք:

## **Ստուգիչ և ամփոփիչ հարցեր**

1. Ինչ հանգամանքներ է պետք հաշվի առնել մոդելավորման ժամանակ:
2. Քանի տեսակի է լինում մարդու դեմքի կառուցվածքը:
3. Քանի տեսակի են լինում սանրվածքները:
4. Նշեք հանդիսավոր սանրվածքների առանձնահատկությունները:
5. Ինչ կապ ունի սանրվածքը և մարդու դեմքի կառուցվածքը:
6. Դասակարգեք սանրվածքները և դրանց առանձնահատկությունները:
7. Քանի խմբերի են բաժանվում սանրվածքներն ըստ նշանակության:
8. Բնութագրեք բարդ և հանդիսավոր սանրվածքները:
9. Ինչո՞վ է պայմանավորված սանրվածքի ընտրությունը:

### 3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Վերջին ժամանակներում շատ է խոսվում ուսումնական գործընթացի կազմակերպման այնպիսի ձևերի կիրառման անհրաժեշտության մասին, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ իրականացնելու սովորողների կողմից մասնագիտական գիտելիքների յուրացման գործընթացը: Ակնհայտ է, որ ուսուցումն արդյունավետ դարձնելու խնդրում կարևորվում է հատկապես ուսուցման մեթոդների դերը: Սովորողների կարողությունների ձևավորումն անմիջականորեն կախված է նրանից, թե ինչ ճանապարհով (մեթոդով) են ձևավորվում ուսումնական նյութում առկա հասկացությունները: Եթե դրանք դասավանդողը նրան մատուցում է պատրաստի ձևով, և ինքն (սովորողը) այդ հասկացությունների ձևավորման և զարգացման գործընթացում անձնական ներդրում չունի, ապա գիտելիքների յուրացման աստիճանը բարձր լինել չի կարող: Այդ է պատճառը, որ ժամանակակից ուսուցման գործընթացում կարևորվում է մեթոդների կիրառումը: Դրանք չեն ենթադրում միայն ու միայն պատրաստի գիտելիքի հաղորդում: Մեթոդների գործադրման ընթացքում չեն տրվում պատրաստի լուծումներ, այլ սովորողների առջև դրվում է որևէ խնդիր, կազմակերպվում է ինքնուրույն որոնողական գործունեություն, ինչն էլ սովորողին հարկադրում է անցնել տվյալ նյութի հետազոտության բոլոր փուլերով:

Ուսումնական գործընթացում «կարողություն» հասկացությունը հաճախ օգտագործվում է այն դեպքում, երբ խոսվում է ուսումնական գործընթացում գիտելիքների և հմտությունների հետ նրա ունեցած կապի մասին, այսինքն՝ մշակված հմտությունների և յուրացված գիտելիքների համատեքստում: Համարվում է, որ եթե սովորողը կարողանում է օգտվել յուրացված իր նախկին գիտելիքներից և մշակված հմտություններից, ապա նա դրանք ազատորեն օգտագործում է նոր առաջադրանքների կատարման ժամանակ: Անտեսվում է այն հանգամանքը, որ հմտությունների մշակմանը զուգընթաց գիտակցական հսկողությունն աստիճանաբար թուլանում է և ամեն ինչ կատարվում է ի հաշիվ վարժվածության: Կարողությունն էլ վարժեցված գործողությունների գործընթացում դիտվում է որպես գիտելիքների և հմտությունների վերարտադրություն: Փաստորեն, սա այն կարողությունն է, որն անվանում են վերարտադրողական և որն իր մեջ հետազոտական և ստեղծագործական պահեր քիչ է պարունակում: Այդ պատճառով էլ այն քննարկվում է գործողությունների նմանակման հիմքի վրա, կապված է հմտությունների հետ և դիտարկվում է որպես գործողություններ կատարելու հնարավորություն կամ գործողության կատարման եղանակ:

Իրարից պետք է զանազանել վերարտադրողական և հետազոտական կարողությունների տեսակները: Առաջինի շարքում պետք է դասել ավանդական դիդակտիկայի և հոգեբանության մեջ ընդունված կարողությունները, երկրորդի մեջ այն կարողությունները, որոնք երևան են գալիս հետազոտություններ իրականացնելիս ու նպաստում են տեսական և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Կարևորը սովորողների

մեջ հետազոտական կարողություններ ձևավորելն է, քանզի նման կարողությունների առկայությունը հնարավորություն կտա նրանց ուսումնական գործունեության մեջ բացահայտել այնպիսի «նորոյթներ», որոնք հասարակությանը վաղուց են հայտնի, բայց իրենց համար մինչ այդ բացահայտված չեն եղել: Հետազոտական կարողությունը սովորողին հնարավորություն կտա անդրադարձորեն գնահատել իր կողմից իրականացված գործունեության որակը, արդյունավետությունը, հարստացնել սեփական փորձը:

**Ուսուցման մեթոդ** - գործնական և տեսական գործունեությունը կարգավորող այնպիսի ճանաչողական սկզբունքների, միջոցների, մոտեցումների, հնարքների գործադրում է, որոնցով թելադրվում են դասավանդողի և սովորողի փոխհարաբերությունների մեջ մտնելու ձևերը և որոնց միջոցով սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, զարգանում է նրանց ընդունակությունները, կարողությունները, հմտությունները, ձևավորվում աշխարհայացքը:

Ուսուցման համապիտանի /ունիվերսալ/ մեթոդ գոյություն չունի: Ուսուցման մեթոդի ընտրությունը և գործադրումը պայմանավորված է ուսուցման նպատակով և բովանդակությամբ, հետևաբար ժամանակի ընթացքում այն կարող է փոփոխվել:

Ուսուցման գործընթացի սովորողի և սովորեցնողի միջև ակտիվ փոխազդեցության (հետևաբար և համագործակցային միջավայրի) ապահովումը սերտորեն պայմանավորված է ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների գործադրմամբ:

Գտնվել փոխներգործուն փոխազդեցության մեջ նշանակում է գտնվել երկխոսության մեջ ինչ-որ մեկի (կամ համակարգչի) հետ: Այլ խոսքով, փոխներգործուն մեթոդները ենթադրում են սովորողների ակտիվության վրա հենված առավել ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն դասավանդողի, այլև միմյանց հետ: Փոխներգործուն ուսուցման գործընթացում ուսուցչի դերը նպատակների նվաճումն է՝ սովորողների գործունեությունն ուղղորդելու միջոցով: Նա մշակում է և՛ դասի պլանը, և՛ դասի ընթացքը, և՛ դասին վերաբերող յուրաքանչյուր քայլ: Փոխներգործուն դասերի հիմնական բաղադրատարրերը սովորողների կողմից կատարվող փոխներգործուն վարժություններն ու առաջադրանքներն են: Փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների էական տարբերությունը սովորական առաջադրանքներից այն է, որ դրանց կատարման ընթացքում սովորողները ոչ միայն միմյանց հետ համագործակցելով ամրապնդում են անցած ուսումնական նյութերը, այլև ուսումնասիրում են նորը:

Հարկ է նշել, որ չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է և անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է այս կամ այն ընդհանուր մեթոդական հնարը, վարժությունը հարմարեցնել իրավիճակին, այլ ոչ թե պարտադրել այն: Չպետք է մոռանալ, որ որևէ թեմա դասավանդելու համար չկա պարտադիր գործադրվող և ոչ մի մեթոդ: Ուսուցիչը ազատ է մեթոդական հնարի ընտ-

րության հարցում, միայն թե ուսուցման այդ փուլում կարողանա հասնել իր առջև դրված նպատակների իրականացմանը:

## **Ուսուցման մեթոդների ընտրությունը**

Այս հարցում դասավանդողն ազատ է: Սակայն դա չի նշանակում, որ մեթոդի ընտրությունը կարող է կամայական բնույթ կրել: Այն անմիջակա- նորեն պետք է կապվի դասի նպատակի հետ, որն անպայմանորեն պետք լինի կոնկրետ, չափելի և հասանելի:

Մանկավարժական գրականության մեջ կան մի շարք գործոններ, որոն- ցով պայմանավորված են մեթոդի ընտրությունը: Դրանք են՝

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- բովանդակությունը,
- ուսումնական նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- սովորողների շահագրգռվածությունը,
- սովորողների տարիքն ու աշխատունակությունը, ուսումնական վարժ- վածությունն ու դիմացկունությունը,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները,
- մյուս (նախորդ) դասերին կիրառվող մեթոդները,
- ուսումնական պարամունքների տիպը և կառուցվածքը,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները (ավտորիտար, համագոր- ծակցային),
- սովորողների թվաքանակը դասարանում,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:


## **T-աձև աղյուսակ**

T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչնե- րից ամենապարզն է և կազմակերպական ձևով, և կառուցվածքով: Այն, ինչպես նախորդ ձևերը, կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշ- խատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժ- նից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/ հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

T-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս:


### Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Եթե փորձենք



համեմատել Վենի դիագրամը T-աձև աղյուսակի հետ, ակնհայտ կլինի, որ Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու (երեք...) հասկացությունների ընդհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները:

Սա ևս անհատապես կամ խմբով (հաճախ ավելի արդյունավետ է՝ զույգերով) կատարվող վարժություն է, որը տեղեկատվության մեծ և մանրամասն պաշար չի պարունակում, չնայած կարևոր է նշել այն հանգամանքը, որ ընդհանրություններն ու առանձնահատկությունները նշելիս սովորողներից պահանջվում է ընդգրկուն ձևակերպումներ գրառել: Երբեմն, այնուամենայնիվ, դիագրամի շրջանաձև տարածքները կամ ընդհանրությունների համար նախատեսված հատման մասը չեն բավարարում մտքերը լիարժեք գրի առնելու համար: Սա չպետք է խանգարի տեխնիկան կիրառելիս ծնված բոլոր մտքերը գրանցելուն: Այս դեպքում Վենի դիագրամը կարող է փոքր-ինչ այլ գծապատկերով հանդես գալ: Ասենք՝ այսպիսի:



Այս մեթոդը համակարգող դեր ունի և օգտագործվում է դասի ամփոփիչ փուլերում՝ նյութի ընդհանրացման և ամփոփման նպատակով:


## Պրիզմա

Պրիզման ևս մտածողության ընթացքը պատկերավոր, շոշափելի դարձնելու պարզ ձև է: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզման կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը:

### Ընթացքը

- Տրվում է մեկնաբանող՝ այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, ինչը ենթակա է ուսումնասիրության:
- Սխեմայի հաջորդ երկու վանդակներում առանց քննարկման գրանցվում են մեկնաբանի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը: Հարկ է նշել նաև, որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են առաջինը հնչած բառերը: Պետք է հետևել, որ հնարավորինս կանխվեն գիտակցական մակարդակում ծնված բառերի ու հասկացությունների գրանցումը և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը:
- Ասոցիատիվ մտածողության վրա հիմնվող այս ընթացքը շարունակվում է մինչև վերջ: Առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման (ինչպես տրված է օրինակում), որից հետո պրիզման սկսվում է փակվել: Այս անգամ վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով:
- Պրիզման եզրափակվում է վերջնաբանով:
- Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբանի ու վերջնաբանի միջև տրամաբանական կապ գտնելն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մտքի մեջ, վերջիններիս կարելի է անդրադառնալ հետագայում՝ նյութի ամփոփման ժամանակ:
- Այսպիսով, եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում՝ մեկնաբանն ու սկզբնաբանը մեկ մտքի կամ նախադասության մեջ կապելիս ակտիվանում է գիտակցական ոլորտը:

Ստորև բերված է վերոհիշյալ քայլերով կատարված մի օրինակ: Նույն «կրթություն» մեկնաբանով կարող են ստացվել պրիզմայի ամենատարբեր և բազմաթիվ տարբերակներ:



### Քառաբաժան

Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանն արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքն սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ՝ բաժանված չորս մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է, իհարկե, դրանք զարգացնել՝ նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները:

<p>1. Ի՞նչ զգացողություններ ունեցաք աշխատանքի ընթացքում:</p>	<p>2. Ո՞ր հարցում դժվարացաք:</p>
<p>3. Աշխատանքի կապը իրական կյանքի հետ:</p>	<p>4. Նոր ռազմավարության մշակում:</p>



## Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը

Տեքստերի (հատկապես՝ սկզբնաղբյուրների) հետ արդյունավետ աշխատելու համար համար կարևոր է Փոխներգործուն գրառումների համակարգի կիրառումը:

Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար:

Ընթերցելով նյութը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ-ի հետևյալ նշանները.

- V = հաստատում է իմ իմացածը (գիտեմ)
- +
- 
- ?
- !

Այս նշանների օգտագործումը ընթերցանության ընթացքում նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը՝ նորը, հակասականը և անհասկանալին ընդգծելու առումներով:

ՓԳՀ նշանների առատությունը արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի հետ կատարած աշխատանքի արդյունավետությունը:

Նյութն արդյունավետ յուրացնելու համար օգտակար է, որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ հետևյալ ձևով.

V	+	-	?	!

Այնուհետև կարելի է կազմակերպել զույգերով, խմբերով մտքերի փոխանակություն, նյութի քննարկում կամ բանավեճ:

Աղյուսակի երրորդ և չորրորդ բաժինները կարելի է նաև տալ որպես հանձնարարություն՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկատվություններ քաղելու և գիտելիքները խորացնելու համար:

## **ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ**

### **Նկարագրությունը և նպատակը**

Դերային խաղը ուսման կամ փորձի հարստացման միջոց է խմբի մասնակիցներին անսպասելի իրավիճակներ առաջարկելու ձևով, որոնցում անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև փորձել դա հասունացնել և ավարտել /խաղ/:

### **Ընթացքը**

Դերային խաղից մեծ օգուտ քաղելու համար պետք է առաջարկվող իրավիճակները հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Անհրաժեշտ է բավարար ժամանակ տրամադրել դերային խաղում ներգրավված դերերը /կերպարները/ նկարագրելու համար և համոզվել, որ խաղի համար ստեղծված պայմանները առավելագույնս համապատասխանում են մասնակիցների հիմնական գործունեությանը:

Դերային խաղի հրահանգում պետք է մանրամասն նկարագրվի իրավիճակի բոլոր կողմերը: Միաժամանակ հրահանգը պետք է խիստ սահմանափակումներ չունենա, որպեսզի չխանգարի մասնակիցներին այդ դերը խաղալ իրենց պատկերացումներին համապատասխան: Դերային խաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ:

Խնդիրը, որի լուծման վրա աշխատում են դերային խաղի մասնակիցները /կարող են մասնակցել մեկ կամ մի քանի հոգի/, կոնկրետ մարդկանց առօրյա կյանքին բնորոշ վարքային մոդելի ստեղծումն է:

Անհրաժեշտ է նշել, որ դերային խաղից հետո քննարկման առարկա է դառնում մասնակիցների վարքը, ոչ թե՛ նրանց ընդունակությունները:

Դերային խաղի կիրառման ընթացքում խումբը պետք է հետևի այդ խաղի ընթացքին: Նա, ով չի մասնակցում խաղին, դիտորդի դեր է կատարում. նշումներ է անում դերային խաղի մասնակիցների վարքի և դրա հետևանքների վերաբերյալ: Դերային խաղի ավարտը որոշում է ուսուցիչը:

Դերային խաղը հաճախ կառուցվում է պոտենցիալ կոնֆլիկտների շուրջ, որոնք առաջանում են թյուրիմացություններից: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ ունեն:

Դերային խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ պարունակող թեմաներ, հետևաբար դրան մասնակցողները պետք է ներկայացնեն տարբեր տեսակետներ /դերեր/:

### **Խորհուրդներ անցկացման վերաբերյալ**

#### **1. Մշակել մանրակրկիտ պլան**

Դերային խաղի գրագետ իրականացումը անգնահատելի օգուտ է բերում մասնակիցներին: Դրանք ցանկալի է անցկացնել դասընթացի մոտա-

վորապես մեջտեղում, երբ խումբը պատրաստ է հաղթահարել դասընթացի սկզբին բնորոշ դիմադրությունը:

#### 2. Դերային խաղը անցկացնել տեղին

Դերային խաղի արդյունավետությունը պայմանավորված է նրա կենսականությամբ և նոր ապրումներով: Դա նշանակում է, որ մեթոդը պետք է կիրառել զգույշ: Եթե խաղեր անցկացվեն յուրաքանչյուր պատեհ-անպատեհ առիթներով, դրանք կարժեզրկվեն:

#### 3. Ցանկալի է, որ խմբերը փոքր լինեն

Արդեն նշվել է դերային խաղի նկատմամբ դիմադրության հաղթահարման մասին: Այդ գործընթացին օգնում է, եթե խմբի մասնակիցների քանակը շատ չէ: Խմբի փոքրաթիվ լինելը նպաստում է հանգիստ, ոչ ֆորմալ միջավայրի ստեղծմանը: Իհարկե, դերային խաղ կարելի է անցկացնել նաև համեմատաբար մեծ խմբում, այս դեպքում այն բաժանելով փոքր ենթախմբերի, որոնցից յուրաքանչյուրն ունենում է դերեր /նաև դիտորդի/ և հրահանգներ: Այս դեպքում ժամանակն այնպես է հաշվարկվում, որ փոքր խմբերի բոլոր անդամները կարողանան քննարկել իրենց ենթախմբի աշխատանքը մեծ խմբում:

#### 4. Ստեղծագործաբար կիրառել դերային խաղը

Դերային խաղն ուսուցման մյուս մեթոդներից առանձնացնելու պատճառ չկա: Ցանկալի է գործընթացն այնպես կառուցել, որ տեսական մասին հետևի դերային խաղը, որը հնարավորություն կտա գործնականում կիրառել նոր սովորած սկզբունքները:

Գոյություն ունի դերային խաղի ևս մեկ տարբերակ, երբ դերային խաղի ընթացքում մասնակիցների դերերը փոխվում են, և նրանք կատարում են այն դերը, որ հակառակ կամ հակադիր է իրենց տեսակետին, կամ որը արմատապես հակասում է մասնակիցների սովորական գործողություններին և սկզբունքներին: Դերային խաղի այսպիսի ձևը հնարավորություն է տալիս ավելի խորը գնահատել ուրիշների պրոբլեմներն ու առավելությունները:

### **Ինչպես բաժանել դերերը**

Կարելի է կիրառել մի քանի հնարներ.

- պատահական բաշխում,
- սկզբում բաժանել գլխավոր դերերը, մնացածն ըստ ցանկության,
- դերերը տալ ըստ մասնակիցների՝ այդ դերերին համապատասխանության,
- ընտրել այնպիսի մասնակիցների, որոնք ունեն առաջարկվող դերի հակառակ որակները,
- ընտրությունը թողնել մասնակիցներին

Դերերի բաժանելու ձևը կախված է դերային խաղի նպատակից և կոնկրետ խմբից:

## **Մեթոդի առավելությունները**

1. Ձեռք բերած փորձը պահպանվում է երկար

« Ուսուցումը գործողությունների միջոցով». սա ուսման և փորձի ձեռքբերման արդյունավետ ձևերից մեկն է: Սեփական ապրումները հիշվում են երկար և մանրամասն:

2. Հաճելի լինելը

Դերային խաղը գիտելիքների և հմտությունների ձեռքբերման համեմատաբար ավելի հաճելի ձև է:

3. Այլ մարդկանց վարքի պատճառները հասկանալը

Դերային խաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ: Այդ հասկացումը կարող է դառնալ ուսման հզոր գործիք, այն կարող է նպաստել այլ մարդկանց վարքի պատճառները հասկանալու ունակության զարգացմանը, ինչին դժվար է հասնել այլ մեթոդներով:

4. Անվտանգ պայմանները

Դերային խաղի կիրառումը ունի ռիսկի մեծ գործոն, որը գլխավորապես վերաբերում է խմբի ռեակցիային, այլ ոչ թե խաղի ազդեցությանը խմբի մասնակիցների վրա:

Դերային խաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս յուրացնել, ամրապնդել վարքի տարբեր մոդելներ: Այստեղ առավելությունը ապահով, անվտանգ միջավայրն է այս կամ այն մոդելը կիրառելու համար:

## **Մեթոդի սահմանափակումները**

1. Արհեստականությունը

Դերային խաղը արդյունավետ է, երբ ստեղծվում են իրականին մոտ իրավիճակներ: Եթե խումբը զգում է, որ խաղի սցենարը իրական չէ, հաշվի չի առնում իրական գործունեության որոշ կարևոր կողմեր և խաղը կարող է արժեզրկվել, ինչի արդյունքում չեն իրականանա ուսուցման նպատակները:

2. Մասնակիցների կողմից հնարավոր ոչ լրջմիտ վերաբերմունքը

Եթե վարժության նպատակը բացատրված է մասնակի և շեշտը դրված է ոչ թե խաղի իրականացման կարևորության, այլ դերասանական ընդունակությունների վրա, ապա վտանգ կա, որ խաղը կընկալվի որպես զվարճանք:

Իհարկե, վարժանքի լուրջ նպատակները չեն խանգարում հաճույք ստանալ դրան մասնակցելուց կամ ընթացքում կատակելուց:

3. Ռիսկի գործոնը

Ինչպես և ակտիվ ուսուցման յուրաքանչյուր մեթոդ, որը ենթադրում է մասնակիցների ակտիվ ներգրավվածություն, դերային խաղը նույնպես ունի ռիսկի գործոն: Խաղն արդյունք է տալիս, երբ խումբը պատրաստակամ է ներգրավվել դրանում: Եթե խմբի անդամները վախենում են կորցնել դեմքը կամ ամաչում են հենց խաղի գործընթացից, ապա այն անարդյունավետ կլինի: Այն փաստը, որ վարժանքի իրականացումը վերահսկվում է, նույնպես լրացուցիչ լարվածության տեղիք է տալիս:

Դերային խաղը ցանկալի է կիրառել այն դեպքում, երբ մասնակիցները հաղթահարել են տագնապը և զգում են, որ իրենց ինքնագնահատականին ոչինչ չի սպառնում:

### **Դերրիֆինգ**

Դերային խաղից հետո կարևոր է անցկացնել դերրիֆինգ, այսինքն՝

- հանել մասնակիցներին դերերից,
- հստակություն մտցնել կատարվածի մեջ /փաստերի մակարդակ/,
- վերացնել թյուրիմացությունները և քննարկել սխալները,
- հանել լարվածությունը,
- բացահայտել դիրքորոշումները, զգացմունքները, փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել դերային խաղի ժամանակ,
- մասնակիցներին ինքնադիտարկման հնարավորություն տալ,
- զարգացնել դիտողունակության հմտությունները,
- համադրել արդյունքը առաջնային նպատակների հետ,
- վերլուծել՝ ինչու է այսպես ընթացել և ոչ այլ կերպ,
- վարքի վերաբերյալ հետևություններ անել,
- ամրապնդել կամ շտկել անցածը,
- առաջ քաշել նոր թեմաներ մտածելու համար,
- վարքը փոխելու ուղիներ մշակել,
- անդրադառնալ այլ իրավիճակների,
- նախորդ դասերի հետ կապ տեսնել,
- մշակել ուսուցման հետագա պլաններ:

### **Դերրիֆինգի անցկացման հերթականությունը**

Կարևոր է դերրիֆինգը անցկացնել որոշակի հերթականությամբ և ցանկալի է այն չխախտել, այդ դեպքում դերային խաղի նպատակն ավելի հստակ կիրականանա:

#### **1-ին փուլ**

- դերային խաղի մասնակիցներին, դիտորդներին, խմբի մյուս անդամներին հարցնել ռեակցիաների մասին,
- մշակել ընդհանուր տեսակետ:

Ցանկալի է կիրառել բաց հարցեր՝ ինչպե՞ս, ինչո՞ւ, ի՞նչ: Չգնահատել «լավ է, վատ է» սկզբունքով: Պետք չէ ժխտել ճիշտ չհասկացված հրահանգը: Խոսել եղածի մասին, այլ ոչ թե ինչ կարելի էր անել:

Այս փուլում դեռ դիմել դերային անուններով:

#### **2-րդ փուլ**

- Վերլուծել այս կամ այն վարքագծի պատճառները,
- Եզրակացություններ անել,
- Նշել՝ ինչ կարելի է անել իրավիճակը լավացնելու համար:

Կարևոր է հարցնել պատճառները՝ ինչո՞ւ, ինչպե՞ս, ո՞վ, ի՞նչ կլինեն, եթե, ինչո՞ւ ոչ:

Փնտրել այլընտրանքային տարբերակներ: Կա՞ր արդյոք այլ հնարավորություն այլ կերպ վարվելու, թե՞ ոչ:

3-րդ փուլ

- մշակել հետագա միջոցառումների շարքը:

Հետագա քայլերի քննարկում, ինչ պետք է անել՝ կարելի է բաժանվել խմբերի, քննարկել և որոշումներ կայացնել:

### **Կիրառությունը**

Դերային խաղը հաճախ կիրառում են, երբ անհրաժեշտ է զարգացնել միջանձնային հարաբերություններ /բանակցելու, հետադարձ կապ տալու և այլն/:

Իհարկե, ոչ մի տրամաբանական պատճառ չկա դերային խաղը այլ առումներով չկիրառելու համար:

## **ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **Մեթոդի նկարագրությունն ու նպատակները**

Այս մեթոդի կիրառման ժամանակ մասնակիցներին ներկայացվում է իրական կամ երևակայական իրավիճակների (հանգամանքների, դեպքերի, դիպվածների) մի շարք, որոնց ուսումնասիրման, քննարկման, վերլուծության ուղղությամբ այնուհետև անհրաժեշտ է լինում տևական աշխատանք կատարել:

«Դեպքի ուսումնասիրությունը» մեթոդների այն խմբին է պատկանում, որոնք ներառում են տարբեր այլ մեթոդների բաղադրիչներ, այլ կերպ ասած՝ ինտեգրում են մի շարք մեթոդական հնարներ՝ ընդհանուր նպատակի ծառայեցնելու համար: Կապված ուսումնասիրվող դեպքի բնույթից, ուսուցիչը կարող է դիմել Մոագրոհի («Մտքերի տարափ»), Բանավեճի, Դերային խաղի, Դասախոսության մեթոդների օգնությանը, աշխատանք կազմակերպել համագործակցային խմբերով և այլն: Այսպիսով «Դեպքի ուսումնասիրություն» մեթոդը կարող է բնութագրվել որպես դեպքի դերային ներկայացում, դեպքի վերաբերյալ մտքերի փոխանակություն, կարծիքների, գաղափարների ազատ շարադրում, մտքերի գեներացիա: «Դեպքի ուսումնասիրության» ընթացքում բանավեճերի, քննարկումների միջոցով դեպքի մանրամասն վերլուծություն է կատարվում, դասախոսության կամ խոսքային ներկայացման (պրեզենտացիայի) միջոցով առկա կամ ենթադրվող (վարկածային) տարբերակ է մատուցվում, հարցադրումներ, եզրահանգումներ են արվում:

«Դեպքի ուսումնասիրության» մեթոդն ունի երեք հիմնական տարբերակ.

1. Երբ սովորողների քննարկմանն է ներկայացվում իրական դեպք (պատմական իրադարձություն, դատական գործընթաց, հասարակական հնչեղություն ստացած վեճ), որն իր ժամանակին քննարկվել և համապատասխան լուծում է ստացել:
2. Երբ դեպքն իր ողջ կարևորությամբ սովորողների քննարկմանն է ներկայացվում առանց այդ մասին հայտնի եզրահանգումների, և հնարավորություն է տրվում սեփական վերլուծությունները համեմատել հայտնի իրադարձությունների հետ:
3. Երբ ուսումնասիրվող նյութը մտացածին է, երևակայական, հնարավոր են դեպքի վերլուծության ամենատարբեր արդյունքներ, բազմակի լուծումներ:

Իրենց հերթին վերոնշյալ երեք տարբերակները կարող են հանդես գալ զանազան տարատեսակներով՝ կախված դեպքի առանձնահատկություններից:

Այսպիսով, մեթոդն իր ամբողջական նկարագրով մի տևական գործընթաց է՝ սովորողների անընդհատ փոփոխվող գործուն, դերային մասնակցությամբ: Մեթոդի նպատակը կոնկրետ դեպքի, իրադարձության, պատահարի բազմակողմանի կամ հանգամանակից ուսումնասիրությունն է, որի արդյունքում գնահատվում-արժևորվում է դեպքը, արվում են եզրահանգումներ:

Եթե փորձենք նշել մեթոդի նպատակներն ըստ սովորողներից պահանջվող վարքի և գործունեության, կստացվի հետևյալ պատկերը.

- Վեր հանել խնդրո առարկա(ները) դիպվածը
  - սովորողից պահանջում է ուշադրություն, կենտրոնացվածություն
  - առաջնային և երկրորդական փաստերի տարանջատում
- Ներկայացնել էությունը, ցուցադրել իրավիճակը (խաղալ, բեմադրել)
  - պատկերավորում,
  - անհրաժեշտ միջոցների ընտրություն
  - հաղորդակցական, հռետորական կարողություններ
- Բացահայտել ներկայացնողի տեսակետը
  - անհրաժեշտ կամ ճշգրիտ հարցադրումների ձևակերպում
  - պակասող կամ թերի ինֆորմացիայի ճշգրտում
- Ընդունել տարբեր տեսակետների առկայությունը
  - հանդուրժողականություն, փոխըմբռնում
  - սեփական տեսակետի հիմնավորում
- Հետազոտել առկա գրավոր և այլ նյութերը տվյալ դեպքի մասին
  - անհրաժեշտ ինֆորմացիայի ձեռքբերում
  - տեքստի, գրավոր տվյալների, նյութերի հետ աշխատելու կարողություններ
- Մեկ, երկու էջ ծավալով ներկայացված ընդհանուր նկարագրություն

- *անհրաժեշտ փաստերի գրավոր շարադրանք*
- *գրավոր խոսքի վերլուծություն, մշակում*
- Հնարավոր լուծման առկայություն կամ լուծման տարբերակի բացակայություն
  - *վերլուծական կարողություններ*
- Դիպվածի ներկայացում մեկ կամ մի քանի տեսանկյուններով, պարզեցված կամ բարդեցված տարբերակներով
  - *երևակայական, սրտեղծագործական կարողություններ*
- Նյութը մատուցել որպես համաձայնեցված որոշման ուսումնասիրություն կամ քննարկման ներկայացվող դեպքի անմշակ նկարագրություն
  - *խմբային (թիմային) աշխատանքի կարողություններ*
  - *միասնական պատասխանատվություն*
  - *որոշումների համատեղ կայացում:*

## **Ընթացքը**

### **Դեպքի նկարագրություն**

Առաջին կարևորագույն քայլը ուսումնասիրվելիք դեպքի հնարավորին ամբողջական նկարագրությունն է, ինչի համար անհրաժեշտ է նկատի ունենալ հանգամանքներ, որոնք անհրաժեշտ են դեպքի նկարագրությունը շարադրելիս.

1. Տեսակետներ, որոնցով կարելի է առաջնորդվել այս փուլում
  - հեղինակի կամ ներկայացնողի դիրքորոշում
  - կողմնակի անձի կամ մի երրորդ կողմի տեսակետ:
2. Հիմնական, բացահայտված փաստեր, որտեղ՝
  - առկա են որոշակի կոնֆլիկտներ
  - հայտնի են մարդիկ, որոնք ունեն տարբեր տեսակետներ, կարծիքներ
  - կան մշակութային, քաղաքական, սոցիալական բնույթ կրող իրողություններ
  - տեսանելի են հակասությունը՝ կոնֆլիկտը լուծող իրավիճակներ:
3. «Լավ» և «վատ» կողմերի այնպիսի հավասարակշռում, որպեսզի շատ պարզունակ և միակողմանի չլինի ճիշտ կողմնորոշումը:
4. Դեպքի ուսումնասիրման ընթացքում բարձրացված խնդիրների լուծման հնարավոր գաղափարների առաջադրում (տես գաղափարների առաջադրման կանոններ):
5. Լավագույն լուծումների սահմանում այն բանից հետո, երբ կետ 4-ում բերված բոլոր լուծումները քննարկված կլինեն լսարանի կողմից:
6. Անհրաժեշտ քայլերի սահմանում, որպեսզի կետ 5-ում սահմանված լուծումը հաջող լինի:



## **Դեպքի վերլուծություն**

7. Անցյալի և ներկայի միջև հակասությունների պարզաբանում:
8. Զուգորդումներ հայտնի նմանատիպ իրավիճակների կամ նախադեպերի հետ:
9. Դեպքի ուսումնասիրմանը տալ քննարկման բնույթ կամ հարցադրումները տանել համոզելու, ներկայացված տարբերակն ընդունելու ուղղությամբ:
10. Ոչ միանշանակ պատասխաններ պահանջող հարցերի կարևորում կամ պատրաստի որոշումների քննարկում և ընդունում՝ ըստ որոշակի համոզմունքների:

## **Դեպքի ներկայացում՝ ըստ սեփական ընկալման**

Անհրաժեշտ օրինակների ընտրություն և ներկայացում:

11. Համատեղ որոշումների արդյունքում ստեղծված մտահղացման սցենարի մշակում:
12. Ներկայացման ձևի, միջոցների և տեխնիկայի ընտրություն:

Այսպիսով, գոյություն ունի կիրառման 3 հիմնական տարբերակ, որով պայմանավորվում են հետագա քայլերը.

1. *պրոբլեմի (ներկայացված իրավիճակի) արժևորում, վերլուծություն*
2. *մեկ կամ մի քանի պրոբլեմների գնահատում և դրանց լուծման տարբերակների առաջադրում, մշակում*
3. *պրոբլեմի լուծման համար ձեռնարկված գործողությունների և դրանց հետևանքների գնահատում:*

Կիրառման համար համապատասխան տարբերակ ընտրելուց հետո որոշվում են մեթոդի կիրառման մասշտաբները, այն, թե քանի խնդիր պետք է ներառվի: Այս խնդիրների բարդությունից կախված՝ կարելի է մեթոդը կիրառել կամ կարճատև վարժանքի ձևով, կամ ավելի մանրամասն, տևական գործընթաց կազմակերպելով՝ կախված թեմայի կարևորությունից կամ ունեցած ժամանակից:

Որոշ դեքերում ինչ-որ կարևոր իրավիճակի շուրջ քննարկումը կարելի կազմակերպել մի քանի հանդիպումների ընթացքում:

Այս տարբերակներից յուրաքանչյուրում ուսուցումն իրականացվում է՝ դեպքը պրոբլեմի կամ պրոբլեմների շարքի տեսքով մատուցելով:

Այդ ինֆորմացիան կարող է շարադրվել փաստագրական տեսքով (հաղորդագրություն), կամ ներկայացվել խոսքային և տեսողական միջոցներով (տեսագրություն կամ լուսապատկերների ցուցադրություն):

Երբ խումբը ստանում է տվյալներ՝ մշակելու, ստուգելու համար, սկսվում է մեթոդի կիրառման բուն գործընթացը:

Վարողը կամ ուսուցիչը վերահսկողություն կարող է իրականացնել, ինչը ևս մեթոդի պակաս կարևոր բաղադրիչներից է: Այն կատարվում է.

- աշխատանքի ժամանակն ավելացնելով կամ կրճատելով,
- որոշակի սահմանափակումների սահմանումով, որոնց շրջանակնե-

րում խումբը պետք է գործի. «պետք չէ օգտվել որևէ լրացուցիչ ինֆորմացիայից» կամ «խումբը պետք է ձեռնարկի ցանկացած լրացուցիչ որոնում»,

- ճնշման ավելացում կամ նվազեցում, մրցակցություն խմբերի միջև, անսպասելի տարրերի ներմուծում և այլն:

#### *4. Համապատասխան նյութի ընտրություն*

Իրավիճակին վերաբերող նյութի ընտրությունը կամ ինքը՝ իրավիճակը, պետք է արտացոլի այն պրոբլեմները, որոնց հետ կարող են առնչվել սովորողները իրականության մեջ: Խումբն իր տրամադրության տակ պետք է ունենա անհրաժեշտ տվյալներ, բայց միևնույն ժամանակ չծանրաբեռնվի տեղեկատվությամբ: Լրացուցիչ տվյալները կարելի է հաղորդել ավելի ուշ կամ խմբի պահանջով:

#### *5. Այլընտրանքի (ալտերնատիվ) առկայություն*

Ընտրված հարցը պետք է բավականին ընդգրկուն լինի, որպեսզի տարբեր լուծումներ առաջադրելու հնարավորություն ընձեռի: Պրոբլեմները, որոնք ունեն մեկ «ճիշտ» պատասխան, այս մեթոդի կիրառման ժամանակ ցանկալի չեն:

#### *6. Փոքրաթիվ խումբ*

Որքան մեծ է խումբը, այնքան ծանր և ոչ ճկուն է դառնում այս մեթոդի կիրառումը: Դիպվածի ուսումնասիրման մեթոդով օպտիմալ արդյունք ստանալու համար ցանկալի է սահմանափակել մասնակիցների քանակը: Սակայն եթե խումբը մեծ է, կարելի է այն բաժանել փոքր ենթախմբերի (4-5 հոգուց բաղկացած), որոնցից յուրաքանչյուրը կզբաղվի ներկայացված պրոբլեմի մասնավոր հարցով:

### **Մեթոդի առավելությունները**

#### *1. Ռեալիզմ*

Այս մեթոդի կիրառումը կարող է արդյունավետ գործնական լրացում լինել հասարակագիտական առարկաների տեսական դասընթացի համար: Սակայն չի բացառվում այս մեթոդի կիրառությունը նաև այլ առարկաներ ուսուցանելիս: Անհերքելի է մեթոդի արդյունավետությունը փաստերի, դեպքերի և գործնական օրինակների ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ տեսական նյութն ավելի խորն ու իրատեսորեն ըմբռնելու համար:

#### *2. Պարտադրանքի, ճնշման հնարավորին նվազեցում*

«Դեպքի ուսումնասիրման» մեթոդը հնարավորություն է տալիս բարդ կամ հուզականորեն նշանակալի հարցերն ուսումնասիրել ուսումնական անկաշկանդ, դրական մթնոլորտում, ինչը դժվար է երաշխավորել իրական կյանքում, ուր դեպքերն ավելի հակասական, սուր եզրերով, հուզականորեն անկառավարելի և սառը դատողությանը չենթարկվող կարող են լինել, ուր կան իրական վտանգներ և չներվող սխալներ: Այսինքն՝ այս մեթոդը հնարավորություն է տալիս մոդելավորել իրական դեպքերը, սովորել առանց տագնապների և անցանկալի հուզումների, խուճապի և հետևանքների:

### *3. Ակտիվ փոխազդեցություն*

Առաջադրանքների կատարման հաղորդակցային բնույթը հնարավորություն է տալիս արագ, բայց ամբողջական գնահատել պրոբլեմի և դրա լուծումների կարևորությունը: Մտքերի ազատ, անկաշկանդ փոխանակումը, կարծիքների բազմազանությունը, հիմնավորումների բազմակողմանիությունը հիմքեր են ստեղծում կամային որակների դրսևորման և ազատ մտածողության զարգացման համար:

### **Մեթոդի սահմանափակությունները**

Թյուրիմացությունների կամ մոլորությունների առաջացում:

Պրոբլեմի լուծմանը տանող յուրաքանչյուր քայլ բացահայտելու, վերլուծելու և հաշվարկելու կարողությունների ձևավորումն այս մեթոդի առավելություններից մեկն է, բայց միաժամանակ նաև նրա սահմանափակումներից մեկը: Դժվար թե իրական կյանքում իրական պրոբլեմի հետ առնչվելիս դեպքերը ճշգրիտ կամ մոդելային ձևերով հանդիպեն՝ նման այն օրինակին, որ քննարկվում է ուսուցման ընթացքում: Դժվար է ակնկալել, որ իրական կյանքում կունենանք այդքան ժամանակ, անվտանգ պայմաններ, որպեսզի կարողանաք լուծել կամ հաղթահարել պրոբլեմը՝ երկար քննելով և վերլուծելով: Սա պետք է բացատրել սովորողներին, քանի որ իրական կյանքում հաճախ ամեն ինչ միանգամից չի ստացվում, և չարժե հիասթափվել:

#### *1. Եզրակացությունների բացակայություն.*

Քանի որ ժամանակային սահմանափակումները թույլ չեն տալիս նյութը մշակել ամենայն մանրամասնությամբ, գործնական առաջադրանքների ոչ լիարժեք կատարումը կարող է անբավարարվածության զգացում առաջացնել:

#### *2. Ճշմարտանմանությունը.*


Ռեալիզմի պահանջը մշտական պահանջ է ցանկացած ուսուցման ձևի համար: Վարժությունը այնպիսին պետք է լինի, որ մասնակիցները կարողանան իրենց նույնացնել առաջարկվող դերերի հետ և իրականացնել դրանք: Սա ևս բարդ խնդիր է դպրոցական ուսուցման շրջանակներում իրականացնելու համար:

### **Մեթոդի կիրառությունը**

Այս մեթոդը կիրառվում է ինչպես փոքր համագործակցային խմբերով, այնպես էլ ենթախմբերի բաժանված մեծ խմբերով աշխատելիս: Ուսումնասիրվող դեպքի մասշտաբներով և տեղեկատվության ընդգրկումով է պայմանավորվում մեթոդի կիրառման տևողությունը: Մեթոդն իրապես արդյունավետ և օգտակար է բազմապիսի ընդունակությունների և կարողությունների զարգացման համար, քանի որ «Դեպքի ուսումնասիրման» ընթացքում սովորողներն առիթ են ունենում որոշումներ կայացնել, պրոբլեմներ լուծել, բանակցություններ վարել և այլն:

## Քառափուլ մեթոդի կիրառումը արհեստանոցում և աշխատավայրում

Քառափուլ մեթոդը կարողությունների, հմտությունների և իրազեկությունների փոխանցման հոգեշարժական մեթոդներից ամենաարդյունավետն է: Այս մեթոդի կիրառումը ենթադրում է գործնական կարողությունների և հմտությունների ձևավորում իրար հաջորդող չորս փուլերով՝ բացատրություն, ցուցադրում, նմանակում, վարժություն:



Քառափուլ մեթոդն ապահովում է յուրացման օղակների՝ ընկալման /ըմբռնման/ իմաստավորման, ամրապնդման և վերարտադրման առկայությունը: Ուսուցման գործընթացի սկզբում վարպետը /դասավանդողը/ բացատրում է աշխատանքային համեմատաբար քիչ տեսանելի գործողություն, որից հետո հնարավորինս մանրակրկիտ գործնական եղանակով ցույց է տալիս աշխատանքային տվյալ գործողությունը: Ուսանողը, լսելով վարպետի բացատրությունը և դիտելով գործողությունը, պետք է նմանակի այն: Վարպետը ուշադրությամբ հետևում է ուսանողի գործունեությանը՝ միաժամանակ տալով ուղղիչ ցուցումներ և կիրառելով ուսումնառողի գործունեության խթանման միջոցներ: Անցնելով հաջորդ վարժեցման փուլին՝ ուսումնառողին առաջարկվում է աշխատանքային գործողությունը կրկնել բազմիցս՝ մինչև գործողությանը լիարժեք տիրապետելը:

Հմտությունների ձևավորման գործընթացում պարզվեց, որ այս մեթոդը կատարյալ է և պիտանի գործնական ուսուցման ժամանակ:

## **Գործողությունները քառափուլ մեթոդի կիրառման ժամանակ**

Քառափուլ մեթոդի 4 փուլերը բնութագրվում են վարպետի և ուսումնառողների փոխադարձ գործունեությամբ, որը կարելի է պատկերել հետևյալ կերպ.


- 1-ին փուլ**- վարպետը բացատրում է, թե ի՞նչ է պետք անել: Նա տալիս է բոլոր տվյալները և տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են որոշակի աշխատանքային գործունեության, քայլի կամ ստացած հմտության կիրառման համար: Ուսանողները ուշադիր լսում են դասավանդողի բանավոր խոսքը:
- 2-րդ փուլ**- վարպետը ցույց է տալիս, թե ինչպե՞ս պետք է կատարել աշխատանքային տվյալ գործողությունը կամ քայլը: Ուսանողները ուշադիր դիտում են: Վարպետը սովորաբար մանրամասնորեն մեկնաբանում է իր գործողությունները: Այստեղ գործածվում է «ցուցադրում» հասկացությունը:
- 3-րդ փուլ**- ուսումնառողները համապատասխանաբար նմանակում են վարպետի ցուցադրած աշխատանքային գործողությունները կամ քայլերը առանձին-առանձին: Վարպետը մեկնաբանում է ամբողջ գործընթացը և տալիս է համապատասխան ուղղիչ ցուցումներ:
- 4-րդ փուլ**- երբ յուրաքանչյուր ուսումնառող հասկանում է աշխատանքային գործունեության կամ քայլի ճշգրիտ կատարման վերաբերյալ ցուցումները և նմանակում, ապա անցնում են աշխատանքային գործողության կամ քայլի բազմիցս կրկնելու միջոցով վարժեցման գործընթացին, ուսումնառողները այնքան են կրկնում գործողությունը, մինչև հասնեն կատարման անհրաժեշտ ընդունելի մակարդակի:

Այնուհետև վարպետը անցնում է դարձյալ քառափուլի հաջորդ աշխատանքային քայլին:

Քառափուլ մեթոդի չորս փուլերին բնորոշ են՝

- վարպետի կողմից ղեկավարվող տեսական և գործնական տեղեկատվության փոխանցման փուլերը գտնվում են պարապմունքների սկզբնահատվածում և իրականացվում են ուսումնառողների ակտիվ գործունեությամբ.
- ուսումնառողների ինքնուրույն գործունեությունը սահմանափակվում է վարպետի կողմից հանձնարարված գործողությունների դաշտով,
- ուսումնառողները ուղղորդվում են անհատական ուսումնական գործունեության առանց մտածողության ավելորդ լարման,
- աշխատանքի կազմակերպման գործընթացում, որպես կանոն, ճկունություն չի նախատեսվում:

**ՔԱՌԱՓՈՒԼ ՄԵԹՈՂ**



**Հրահանգավորումները քառափուլ մեթոդի կիրառման ժամանակ**

Հրահանգավորման նախապատրաստման սկզբում վարպետը որոշում է հրահանգավորումը անցկացնելու վայրը՝ դասասենյակում, արհեստանոցում կամ աշխատատեղում, որը կախված է հրահանգավորման բնույթից և տեսակից: Յուրաքանչյուր հրահանգավորմանը տրամադրվող ժամանակը չպետք է գերազանցի 20-30 րոպե:

**1-ին փուլ- Բացատրություն – Դրդապատճառ – Տեղեկացում**

Առաջադրանքներին վերաբերող աշխատանքային հրահանգավորման ժամանակ այն միշտ պետք է սկսել ուսումնառողների մոտ հետաքրքրություն և դրդապատճառներ առաջացնելով, ուսումնառողների ուշադրությունը հրավիրել ուսումնասիրության ենթակա աշխատանքային գործողության կամ քայլի վրա: Այնուհետև վարպետը հաղորդում է աշխատանքային առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներն ու տեղեկությունները: Նա բացատրում է կատարման ենթակա գործողությունները և ամբողջ գործընթացները: Հրահանգավորումների ժամանակ վարպետը կարող է կիրառել գործնական պարապմունքի համար նախատեսված բոլոր ուսումնական նյութը և տեղեկատվական միջոցները, օրինակ՝ տեխնիկական գծագրեր, աշխատանքի պլաններ, շահագործման ուղեցույցեր, գործիքներ, ինչպես նաև հումքային նյութեր՝ որպես գննական պարագաներ: Վարպետը պետք է բացատրի աշխատանքային գործողությունները քայլերի կատարման հաջորդականությամբ և ամենանպաստավոր պայմանների դեպքում ուսումնառողներին առաջարկի բոլոր գործողություններն ու քայլերը գրանցել իրենց աշխատանքային տետրերում՝ պլանում: Կատարված աշխատանքների որակի տարբերությունները ցույց

տալու նպատակով նա պարապմունքների այս փուլում արդեն կարող է ցույց տալ փորձնական աշխատանքների հաջողված և պակաս հաջողված օրինակները: Պարապմունքի այս հատվածում ուսումնառողները համեմատաբար պասիվ են, նրանք ուղղակի լսում են և դիտում:

## **2-րդ փուլ. Ցուցադրում**

Այս փուլում վարպետն ինքն է ցուցադրում աշխատանքային գործողություններն ու քայլերը: Այդ նպատակով նա նախապես ընտրում է ամենահարմար աշխատանքային պլանը, ցուցադրման համար անհրաժեշտ միջոցներն ու սարքավորումները, գործիքները, նյութերը, հումքը: Ցուցադրումը կազմակերպում է այնպես, որ բոլոր ուսումնառողները լինեն ուշադիր և հետևեն ցուցադրման գործընթացին: Հմտության ձևավորմանը նվիրված ցուցադրումը խորհուրդ է տրվում կրկնել 3 անգամ:

**1-ին ցուցադրում.** նորմալ արագությամբ՝ ամբողջական և իրական տպավորություն ստեղծելու համար,

**2-րդ ցուցադրում.** ընդգծված դանդաղ արագությամբ՝ առանձին քայլերն ավելի հստակ ցուցադրելու և առանձնահատկությունները լավ ցույց տալու նպատակով, միաժամանակ տրվում է նաև ցուցումներ աշխատանքի պաշտպանության և անվտանգության վերաբերյալ:

**3-րդ ցուցադրում.** նորմալ արագություն՝ որպեսզի նորից ցույց տրվի հմտությունը գործունեության համատեքստում և առաջացնի «ներքին նկարի» ստեղծում:

Այս դեպքում ցուցադրությունը զուգակցվում է վարպետի բացատրություններով: Այնուհետև հայտարարվում է ուղիղ հրահանգավորման ավարտը:

## **3-րդ փուլ. Նմանակում - իմիտացիա**

Այժմ ուսումնառողներից պահանջվում է նմանակել վարպետի գործողությունները առանձին-առանձին, իսկ վարպետը, հետևելով ուսումնառողի գործողություններին, ցուցումներն է տալիս բացթողումների լրացման և թույլ տրված անճշտությունների ուղղման համար: Այս դեպքում ևս խորհուրդ է տրվում կիրառել խրախուսման և պատժի միջոցները. լավագույն ձևով գործողության իրականացման համար կիրառում է գովասանքը, հակառակ դեպքում նախատում և մեկ անգամ ևս ցույց է տալիս:

Երբ վարպետը տեսնում է, որ բոլոր ուսումնառողները հասկացել են աշխատանքային գործընթացը և տիրապետում են աշխատանքային գործողության կամ քայլի կարողությանը, անհրաժեշտ հմտությունների ձևավորման նպատակով անցնում է վարժությունների կատարմանը:

## **4-րդ փուլ. Վարժություն**

Վարպետը ուսումնառողներին տրամադրում է անհրաժեշտ քանակությամբ հումք, աշխատանքի տեղ ու միջոցներ՝ բազմաթիվ անգամ կրկնե-

լու միջոցով վարժեցնելու աշխատանքային հմտությունների ձևավորմանը: Ընդ որում՝ յուրաքանչյուր ուսումնառող աշխատում է ինքնուրույն, անհատական ձևով, սակայն կիրառելով աշխատանքային միևնույն տեխնիկան և մեթոդիկան:

Եթե աշխատանքի արդյունքների որակը համապատասխանում է ընդունելի կատարման չափորոշիչին /որակի սահմանված չափանիշներ՝ ճշգրիտ նպատակներ/, ապա այս ուղղությամբ աշխատանքը կարելի է ավարտել:

Պարապմունքի այս հատվածում վարպետը ստանձնում է հսկիչի դեր:

### **Ծանոթագրություն**

1-ին և 2-րդ քայլի ժամանակ վարպետը կարող է ստուգել անհրաժեշտ նախնական գիտելիքի առկայությունը: Ոչ բավարար նախնական գիտելիքի դեպքում վարպետը պետք է անցկացնի պարապմունք՝ նվիրված անհրաժեշտ գիտելիքների բազայի ստեղծմանը:

## **Ուսուցման և վարժությունների համար նյութերի և առաջադրանքների պատրաստումը**

Ուսուցման քառափուլ մեթոդի կիրառումը նյութատար չէ, դրա նախապատրաստումը մեծ ծախսեր չի պահանջում, և այն կարող է բավարարվել շատ աննշան միջոցներով: Որպես ուսուցանող նյութեր կիրառվում են բնագիր աշխատանքային փաստաթղթերը, տեխնիկական գծագրերը, էլեկտրական սխեմաները, աշխատանքային գործողությունները կամ քայլերը՝ դիտողություններով, աշխատանքային պլանի ձևով ներկայացվող աղյուսակները, աշխատանքների կատարման մասին գրանցումներով հսկման թերթիկները:

Խորհուրդ է տրվում տեխնիկական գծագրերը ժամանակավորապես ուսումնառողներին տրամադրելուց առաջ ծածկել թափանցիկ թաղանթով:

Յուրաքանչյուր ուսումնառող՝ որպես անհատական աշխատանքի հաշվառման միջոց, պետք է լրացնի աշխատանքային պլանի ձևը: Այդ նպատակով վարպետը նրան է տրամադրում նախապես պատրաստված ձևը, որը պետք է լրացնի ուսումնառողը: Հսկման կամ գնահատման թերթիկները ևս պետք է լինեն հաստատված ձևի, և վարժությունների ավարտից հետո դրանք հանձնվում են վարպետին՝ որպես հանձնարարությունների կատարումը հաստատող փաստ:

Ի լրումն տրամադրվող բաշխվող նյութերի՝ կարող են տրվել նաև հատվածներ մասնագիտական, տեղեկատվական գրականությունից, նյութեր այլ գրքերից կամ շահագործման ուղեցույցներից:

Վարժությունների համար նյութեր են ծառայում այն միջոցները, որոնք անհրաժեշտ են գործնական աշխատանքներ կատարելիս: Վարժությունների նյութի ձեռքբերման հայտ ներկայացման գործընթացը ճիշտ պլանավորելու համար վարպետը պետք է պատրաստի փաստաթուղթ, որը ընդգրկում է հետևյալ ցուցանիշները.



- բոլոր դասընթացների վարժությունների ցուցակ /անվանում և քանակ/,
- տեխնիկական գծագիր ունենալու հնարավորություն /ստուգել ընթեռնելիությունը/,
- ցուցում կոնկրետ վարժությունների համար անհրաժեշտ հումքի քանակի մասին,
- ցուցումներ անհրաժեշտ գործիքների, օժանդակ միջոցների վերաբերյալ,
- հմտությունների ձևավորման գործընթացի մասին ցուցում և այդ գործընթացի համար անհրաժեշտ ժամանակի մոտավոր հաշվարկը:

Պլանավորման հաջորդ չափանիշը գործիքի մաշվածությունն է, և այն պետք է հաշվառել այնպես, որ վարպետը հստակ տվյալներ ունենա հին գործիքներն ու միջոցները նորերով փոխարինելու անվանացանկի և թվաքանակի մասին:

Վարժությունները կարող են անցկացվել բոլոր ուսումնառողների կողմից միաժամանակ, եթե յուրաքանչյուր ուսումնառող ունի անհատական գործիքներ: Ոչ բավարար թվով գործիքների առկայության դեպքում կարող է ընդունվել այլ կազմակերպչական որոշում, ինչպես, օրինակ՝ գործիքների օգտագործումը հերթով կամ հերթով վարժություններ և այլն:

## 4. ԴԱՍԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

**Դասի թեման՝** «Կառե-Գրադուլիրովկա» կտրվածքի տեխնոլոգիան  
**Դասի նպատակը՝** «Կառե» կտրվածքի տեխնոլոգիայի ուսուցում «Գրա-  
դուլիրովկա» մեթոդով

### Խնդիրները՝

- ծանոթանալ «Կառե-Գրադուլիրովկա» կտրվածքի տեխնոլոգիային.
- գտնել նմանություններ և տարբերություններ դասական «Կառեի» հետ.
- նպաստել սովորողների գեղագիտական ճաշակի զարգացմանը.
- զարգացնել համագործակցային և հաղորդակցական կարողությունները.
- տևողությունը՝ 45 րոպե:

**Անհրաժեշտ նյութեր՝** դասագիրք, սանրվածքների գծապատկերներ, լուսանկարներ, սանր, մկրատ, մազակալներ, վարսահարդարիչ, մոդել, կեղծամ, գունավոր մատիտներ:

**Դասի տեսակը՝** համակցված/տեսական և գործնական աշխատանքների հերթագայմամբ/

### Դասի ընթացքը

#### Խթանում՝ 5-7 րոպե

«Մտազրոհ» մեթոդի կիրառմամբ պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը սանրվածքների տեսակների մասին:

Խմբին ուղղել հետևյալ հարցադումները՝

- Մազերի կտրվածքների ինչ հիմնական տեսակներ գիտեք:
- Ինչ ձևափոխությունների կարող են ենթարկվել դասական կտրվածքները:
- Ինչ ձևափոխությունների է ենթարկվել «Կառե» կտրվածքը, անվանե՞ք այդ կտրվածքները:
- Ինչ է նշանակում «Կառե» բառը:

#### Հարց-առաջադրանքներ:

##### 1-ին խումբ

- Հարց. Ներկայացրե՞ք, ինչպե՞ս է առանձնացվում և կտրվում առաջին ստուգիչ մազափունջը:

##### 2-րդ խումբ

- Հարց. Ինչ տեխնոլոգիայով է կտրվում ծոծրակային հատվածի մազերը:

##### 3-րդ խումբ

- Հարց. Ինչ տեխնոլոգիայով է կտրվում քունքային հատված մազերը:

## Իմաստի ընկալում՝ 25 րոպե

Սովորողներին բաժանել 3 խմբի: Խմբի աշխատանքները հիմնականում հենվում են սովորողների համագործակցության, փոխօգնության, բազմաբնույթ մտածողության վրա: Գնահատվում է խմբի համատեղ աշխատանքի արդյունքը:

Յուրաքանչյուր խումբ ստանում է թղթի վրա գրված իր հարցը: Խումբը քննարկում է տրված հարցը, նախապատրաստում է իր պատասխանը: Խմբից որևէ մեկը ներկայացնում է այն: Խմբի անդամները լրացնում են, եթե դրա կարիքը լինում է:

Մյուս խմբի անդամները ևս կարող են խմբի անդամներին հարցեր ուղղել:

**Դասավանդող-** Փորձենք վերհիշել, թե ինչպես է առանձնացվում և կտրվում դասական սանրվածքների առաջին ստուգիչ մազափունջը, ինչպես է կատարվում ծծրակային և քունքային հատվածների մազերի կտրվածքները:

/Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկական հարց-առաջադրանք/:

### Հարց-առաջադրանքներ:

1-ին խումբ

**Հարց.** Ներկայացրեք, ինչպես է առանձնացվում և կտրվում առաջին ստուգիչ մազափունջը:

2-րդ խումբ

**Հարց.** Ի՞նչ տեխնոլոգիայով է կտրվում ծծրակային հատվածի մազերը:

3-րդ խումբ

**Հարց.** Ի՞նչ տեխնոլոգիայով է կտրվում քունքային հատվածի մազերը:

/Խմբի անդամները ներկայացնում են քննարկված հարցերի պատասխանները, դասավանդողը ամփոփում է դրանք և ներկայացնում նոր նյութը/:

**Դասավանդող-** «Կառե-Գրադուիրովկա» սանրվածքը դասական «Կառե» սանրվածքի ձևափոխված տարբերակներից է: Դրա ծծրակային և քունքային հատվածների մազերը կտրվում են դասականի նման: Իսկ հիմա դուք կծանոթանաք մյուս հատվածների կտրման ձևերին:

/Դասավանդողը ներկայացնում է «Կառե-Գրադուիրովկա» սանրվածքի ստացման քայլերը/

- գազաթային հատվածի կտրում,
- 2-րդ ստուգիչ մազափնջի ստացում,
- 3-րդ ստուգիչ մազափնջի ստացում,
- մազերի ծայրերի մշակում,
- հնարավորության դեպքում՝ սանրվածքի վերաբերյալ տեսադիտում:

## **Գործնական աշխատանք.**

Սովորողները բաժանվում են 3 խմբի.

**1. Վիզուալներ/տեսողական ընկալումը** նրանց մոտ ավելի զարգացած է/ Ուսումնասիրել «Կառե-Գրադուիրովկա» կտրվածքի տեխնոլոգիան:

- Դրա հիման վրա նկարել կտրվածքի գծապատկերը՝ գլխի առանձին հատվածներով, հատվածները նշել տարբեր գույնի մատիտներով:
- Գծագրի վրա նշել մազափնջի ձգման անկյունները:
- Գծապատկերի վրա գրել գլխահատվածների անվանումները:
- Սլաքով նշել մազափնջերի ձգման ուղղությունները:

Խումբը ներկայացնում է «Կառե-Գրադուիրովկա» կտրվածքի գծապատկերը:

**2. Աուդիալներ /լսողական ընկալումը** նրանց մոտ ավելի զարգացած է/.

- Կարդալ շշուկով «Կառե-Գրադուիրովկա» կտրվածքի տեխնոլոգիան:
- Խմբի յուրաքանչյուր անդամ շշուկով պատմում է կարդացածը մյուսներին, մյուսները լսում են նրան:

Խումբը ներկայացնում է տեխնոլոգիան՝ բանավոր:

**3. Կինեսթետիկներ /զգայարանների միջոցով ընկալումն ավելի արդյունավետ է/**

- «Կառե-Գրադուիրովկա» կտրվածքի տեխնոլոգիայի հիման վրա կազմել աղյուսակ:
- Մոդելի վրա ցույց տալ մազափնջերի բաժանման հատվածները:

Խումբը ներկայացնում է՝ կտրվածքի աղյուսակը:

### **Կշռադատում՝ 8 րոպե**

Խմբերի աշխատանքները ներկայացնելուց հետո քննարկվում են արդյունքները, գնահատվում: Սովորողները լրացնում են ռեֆլեքսային թեստ, այն անանուն է, հարցերի դիմաց դրվում է <<+> կամ <<-> նշանները:

### **Ռեֆլեքսային թեստ**

1. Ես շատ բան իմացա:
2. Ինձ այն պետք կգա կյանքում:
3. Դասի նյութը մտածելու տեղիք էր տալիս:
4. Ուսուցման գործընթացում ծագած բոլոր հարցերի վերաբերյալ ստացա պատասխաններ:
5. Դասին ես հաճույքով մասնակցեցի և հասա իմ առջև դրված նպատակին:

**Դասի թեման՝** Մոդելավորման հիմունքներ

**Դասի նպատակը՝** սանրվածքի մոդելավորում

**Խնդիրները՝**

- ստեղծել սանրվածք՝ պայմանավորված հաճախորդի աշխատանքի բնույթով /դասական, սպորտային, հանգստի համար նախատեսված և այլն/.

- մոդելավորել սանրվածքը՝ հաշվի առնելով հաճախորդի դեմքի տեսակը.
- իրականացնել շտկողական աշխատանքներ՝ կապված դեմքի տեսակի հետ.
- բավարարել հաճախորդի գեղեցիկ սանրվածքով հանդես գալու պահանջմունքը.
- նպաստել հաճախորդի գեղագիտական ճաշակի զարգացմանը:

### **Տևողությունը՝ 45 րոպե**

**Անհրաժեշտ նյութեր՝** դասագիրք, դեմքի տեսակների ուրվանկարներ, մոդել, մատիտ, թուղթ, սանր, վարսահարդարիչ, կեղծամ:

**Դասի տեսակը՝** համակցված /տեսական և գործնական աշխատանքների հերթագայմամբ/

### **Դասի ընթացքը**

#### **Խթանում՝ 5-7 րոպե**

«Մտագրոհ» մեթոդի կիրառմամբ պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը «մոդելավորում» հասկացության մասին:

Խմբին ուղղել հետևյալ հարցադրումները՝

- Ի՞նչ է սանրվածքը:
- Ինչպե՞ս են դասակարգվում դրանք ըստ նշանակության:
- Ի՞նչ դեմքի տեսակներ գիտեք:

#### **Իմաստի ընկալում՝ 25 րոպե**

Սովորողներին բաժանել 4/կամ 5/ խմբի՝ կախված նրանց քանակից:

Ստեղծել խնդրահարույց իրավիճակ՝ առաջադրելով խմբերին հարցադրումներ:

**Դասավանդող-** Գիտենք, որ ուղղանկյունաձև դեմքին բնորոշ են լայն և բարձր ճակատը, ձգված դունչը: Այսպիսի համամասնությունը դեմքը դարձնում է երկարավուն:

#### **Հարց-առաջադրանքներ:**

Ինչպե՞ս թաքցնել այդ թերությունները /ձեր հաճախորդն ունի դեմքի այդպիսի կառուցվածք/:

Ի՞նչ շտկողական աշխատանքներ կիրականացնեք:

Ի՞նչ սանրվածքներ կառաջարկեք:

Ի՞նչը կբացառեք կամ խորհուրդ չեք տա կատարել:

/Տեն աշխատանքի կազմակերպումը փոքր խմբերով և դրան ներկայացվող պահանջները «Ուսուցման մեթոդներ» բաժնում/:

Խմբերը ներկայացնում են իրենց տեսակետները, լսում միմյանց կարծիքները՝ իրենց առաջադրված հարցերի վերաբերյալ, կազմակերպում քննարկում:

Սովորողների գիտելիքները տվյալ հարցի վերաբերյալ խորացնելու և ամբողջացնելու նպատակով կարելի է նրանց տրամադրել տեսական նյութ, որի վրա ՓԳՆ համակարգի կիրառմամբ նրանք նշեն, թե ի՞նչը գիտեին, ի՞նչը նոր իմացան, ի՞նչն էր, որ այդպես էլ անհասկանալի մնաց:

## **Կշռադատում՝ 8 թույլ**

«Քառաբաժան» մեթոդի միջոցով պարզել սովորողների զգացողությունները, ինչպես նաև նյութի ընկալման աստիճանը:

Ձևակերպե՛ք «Քառաբաժան»-ի համապատասխան հարցադրումները՝ ելնելով կոնկրետ նպատակից:

### **Հուշում /կամ մեթոդական ցուցումներ/**

Ուղղանկյունաձև դեմքի թերությունը կարելի է վերացնել, եթե՝

- մազերի երկարությունը լինի մինչև կզակը.
- գերադասել ծավալային սանրվածքներ՝ փարթամ մազափնջով.
- մազերի ծայրերը փաթաթել դեպի ներս. այս ձևով դեմքն ավելի լայն կընկալվի.
- սանրվածքը լինի ուղիղ բաժուկով.
- թեթև գզել մազերը, իսկ խոպոպներ՝ միայն կողմնային հատվածներում.
- ականջները ծածկել մազերով կամ դրանք ականջների հետևում հարդարել այնպես, որ փաթաթված ծայրերը տեսանելի լինեն միայն ներքևից:

### **Խորհուրդ չի տրվում՝**

- բարձր սանրվածքներ՝ ճակատից վեր բարձրացված մազերով.
- երկար, ուղիղ մազերով սանրվածքներ:

/Տես ուղղանկյունաձև դեմքի ուրվանկարները, ինչպես նաև այն սանրվածքները, որոնցից կարող եք ընտրել այդ կառուցվածքով դեմքին հարմար սանրվածք/:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 2304 «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության «Վարսահարդար» որակավորման պետական չափորոշիչ
2. Ա. Առնաուդյան, Ա. Գյուլբուդադյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար», Երևան-2004
3. Լ. Միլիտոսյան, Ս. Պիպոյան, Հ. Պետրոսյան, Գ. Կիրակոսյան, Տ. Թովմասյան «Մասնագիտական մանկավարժություն», Երևան-2007
4. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան, Ս. Խաչատրյան, Ն.Բայաթյան, Լ. Ալեքսանյան, Վ. Պուրոկուրու «Համագործակցային ուսուցում», Երևան, «Անտարես», 2006:

## Բովանդակություն

1. Ներածություն .....	3
2. Գլուխ 1. Վարսավիրական գործիքներով և սարքավորումներով աշխատելու սկզբնական հմտություններ .....	4
Գլուխ 2. Վարսավիրական գործում օգտագործվող նյութեր .....	8
Գլուխ 3. Մազերի խնամք և նախապատրաստում.....	11
Գլուխ 4. Հաճախորդի հետ շփվելու և աշխատելու հիմունքներ.....	15
Գլուխ 5. Մազերի կտրում .....	18
Գլուխ 6. Մազերի հարդարում.....	22
Գլուխ 7. Մազերի գանգրացում .....	25
Գլուխ 8. Մազերի ներկում.....	28
Գլուխ 9. Կտրվածքների և սանրվածքների մոդելավորման հիմունքներ.....	32
3. Ուսուցման մեթոդներ .....	35
4. Դասերի մեթոդական մշակումներ .....	58
5. Օգտագործված գրականության ցանկ.....	62

Լ. ՎԵՐԴՅԱՆ, Հ. ԽԱՌԱՏՅԱՆ

ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ ԵՎ  
ԶԱՐԴԱՅԻՆ ԴԻՄԱՀԱՐԴԱՐՈՒՄ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐ

ԴԱՍԱԽՈՍԻ ՁԵՌՆԱՐԿ

Պատվեր՝ 850: Տպաքանակ՝ 1000:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում